

3135

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ

Ի Պալամիա, Սեղբոս Խան, թիւ 5.

ՏԱՐԵՐ

ՔԵՐԱԿԱՆԱՊԵԹԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԵՐԱՐ ԱՐԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻԱՑ ՌԻՍՈՒՑՈՒ, ԵԿԵՂ

ԱՃԽԱՏԱՍԻՐԵՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐ-ԴԵՎԱԿՈՒՑԱՑ

ՀԱՏԱՐ Ա.

մարգ գործ յակա ստ քաշտամ սի թ պ ա լ խ շ դ ր

491.99-5

Կ. ՊՈՂՅՈ

8-45

Ը ԱՐԵԽԱԼԳ ԵՒ ՄԱՍԻՄ ԼՐՈԳՐՈՅ

1889

2010

491.542-5

S-45

ՄՐ

ՏԱՐԵՐՔ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՈՅ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՆԻՒԹ

ԱՇԽԱՏԱՎԻՐԵՑ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ—ՊԵԽՈՆԴԵԱՆՑ

8143

8043

Կ. ՊՈԼԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐԵԵԼՀ» ԵՒ «ՄԱՍԻՆ» ԼՐԱԳՐՈՅ

24/49

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Մայրենի լեզուի քերականութեան « Տարերքը » երեք
գրքոյներէ պիտի բաղկանայ որք պիտի բովանդակեն երկու
րորդ, երրորդ և չորրորդ տարիներու ուսանելիքը։ Ներկա-
հրատարակութիւնը երկրորդ տարւոյ ուսանելիքը կը պա-
րունակէ։

Կար ժամանակ մը յորում քերականութիւնը ուսման և
գիտութեան վերջակէտն էր նկատուած, երբ նա համարուած
էր մի արուեստ, այլ դժուարին և մի միայն ընտրելոց ո-
մանց մերձենալի արուեստ։ Բայց այդ ժամանակաւ էր այժմ
գիտակցական ուսումն ապացուցած է որ կարգալ գրելը
ինքնին ոչ այլ ինչ է եթէ ոչ քերականական նախապատրաս-
տութիւն։ Այսպիսով՝ տարրական քերականութիւնը, մեր
կարծեօք, քերականի (այբ-բենարանի) հարազատ եղբայրը
կը հանդիսանայ, և ես կարծեմ թէ մեր նախնիք, երեւի,
մերձաւոր կապ մը գտած են քերականի և քերականութեան
մէջ, որ երկուքին ալ համարեա՛ մի և նոյն անունը տուեր
են։ Իսկ ինչ որ մեր նախնիք մեզմէ տասնեւհինգ դար յա-
ռաջ հասկեր են, մեզ ներելի չէ այժմ չը հասկեալ։

Եթէ արդարեւ քերականութեան պաշտօնն այն է որ
քերականի միջնորդ ութեամբ հազորդուած լեզուագիտական
տարրական գիտելիքները փոքր առ փոքր՝ աստիճանաբար
կոկէ, լրացնէ, կարգաւորէ և վերջապէս ամբողջացնելով՝
ընդհանուր համակարգութեան մը վերածէ, ապա պէտք է
ենթադրել որ քերականութեան ուսումն իսկապէս կ'սկսի
տառածանօթութեան հետ նոյն իսկ առաջին տարիէն։ ու-
րեմն այն քերականական գործնական վարժութիւններն ալ
զորս մենք առաջարկած ենք իբր երկրորդ տարւոյ ուսա-
նելիք, կանխահաս կամ անդործագրելի չը պիտի համար-
ուին երբէք։

3334-55

2012

Բ

Բանիմաց ուսուցիչը պիտի տեսնէ որ մեր յօրինածն այս անգամ խկապէս քերականութիւն ալ չէ այն ձեւով՝ ինչ ձեւով որ զայն կ'ըմբռնեն մեր քերականամոլները, ոյլ քերականութեան նախադուռն է միայն:

Մեր առաջարկած նիւթերը գործնական վարժութիւններ են. կանոնները չ'ունին քերականական անուանակոչութիւններ և որ գիտաւորն է՝ գրաւոր վարժութեանց ընդարձակ տեղ տրուած է:

Մեր առաջարկած նիւթը տարուան մը համար է, այսինքն երկրորդ տարուան համար: Գրքիս ցանկին նայելով, շատ դիւրին է բաել, արդեօտ շա՞տ է այս ամէնը մէկ դարւոց հաշար, արդեօտ բալըն է, արդեօտ ընդընել յեւու դաստիարակուած է եւ չէրտելիները:

— Արդեօք շա՞տ է այս ամենը մէկ տարւոյ համար.

Մենք կ'ըսենք որ երբ վարժապետը չափազանց կը ծանրաբեռնէ զաշակերտը, վատ կը գործէ. բայց նոյնպէս վատ դիւրութեամբ՝ իւր ժամանակին չ'աւանկը գործէ երբ երկչուութեամբ՝ իւր ժամանակին չ'աւանկը մանկանց այն ամենը ինչ որ կարելի էր աւանդել, Մենք կը հաւատանք որ մեր առաջարկածը ամբողջապէս և ամենայն դիւրութեամբ կարելի է մատակարարել երկրորդ տարուան ընթեցքին մէջ: Ոչ ապաքէն սորա մեծադպոյն մասը աշակերտաներն ունին արդէն առաջին տարիին թէեւ ի հարկէ կցկտուր և անկապ:

— Արդեօք բոլո՞րն է.

Կը պատասխանենք որ բոլորն է, համարեա՛ բոլորը ինչ որ երկրորդ տարին կարելի է աւանդել. առարկայ, որպիս սութիւն և գործողութիւն առարկայի, որպիսութեան և գործողութեան անունը՝ թիւը. բառ, վանկ, տառ. ուղղագրութեան գիտաւոր և դժուարին կանոնները գործնականապէս, և պարզ նախադասութեան համառօտ պատկերը: Ահա բոլորը՝ ինչ որ մենք աւանդել որոշած ենք՝ միքները:

— Արդեօք ընտրելի ձեւով դասաւորուած են գիտելիքները.

Զեւի մասին բան չենք զրուցեր. մենք ներկայ ձեւը յարմարագոյն դատեցինք: Թող բարեխիղճ ուսուցիչները, առանց մանրամասնութիւններն արհամարհելու, գիտակցաբար և խղճի մոօք՝ ի գործ դնեն բոլոր վարժութիւնները և պիտի տեսնեն որ իւրեանց աշակերտաները տարւոյն վերջը գործնականապէս ծանօթացած են լեզուին տարրական ամենակարեւոր գիտելեաց հետ և որ մեծն է՝ ուղղագրութեան ու գիտակից ընթեցանութեան մէջ զգալի յառաջադիմութիւններ ըրած են:

Քանի մը նկատողութիւններ եւս

Ինչպէս վերը գիտել տուինք, այս գիրքը իբր երկրորդ տարւոյ ուսուցման նիւթ նշանակուած է և խկապէս մեր «Մայրենի Լեզուի» երկրորդ գրքին երրորդ հատուածի պաշտօնը պիտի կատարէ, բայց աւելի մանրամասն, աւելի կանոնաւոր և մշակուած ձեւով: Հետեւաբար, գրքոյկիս լոյս տեսնելէն յետոյ՝ «Մայրենի Լեզուի» երկրորդ տարւոյ երրորդ հատուածը ինքն իրեն անպէտ և ոչինչ բան մը կը գտանայ:

Գրքիս երկրորդ մասը որ է երրորդ տարւոյ դասընթացը, կ'ամփոփէ իւր մէջ քերականութեան առաջին մասը զոր ըստ սովորութեան սահմանադրութիւն կ'անուաննեն, իսկ տարրական ուսումնարանի չորրորդ տարւոյ ուսանելիքը՝ մեր գրքոյկի երրորդ մասը կը կազմէ որ է քերականութեան համայնքանական մասը: Գրքիս երկրորդ և երրորդ մասերը կը պատրաստուին և հետցիետէ կը տպագրուին:

Ընթեցովը պիտի տեսնէ որ մենք քերականական և լեզուաբանական կանոնները բացատրելու համար երկու միջոց ի գործ գրած ենք. նախ գրած ենք օրինակները և այդ օրինակներէն հետեւցուցած եմք կանոնները. երկրորդ՝ կանոններն աւանդելէ վերջը՝ մէն մի կանոնի համար բազմաթիւ հբահանգներ տուած ենք, զորս գործադրելով՝ կանոն-

Ները հիմնաւորապէս պիտի արմատանան ուսանողաց յիշո-
ղութեան մէջ :

Կանոնաց և հրահանգաց թուահամարները զուգընթաց
են և որպէսզի միմեանց հետ չչփոթուին , կանոնաց թուա-
համարներն աւելի հատ և շօլունելի թուանշաններով ցոյց
տալ որոշեցինք , մինչ հրահանգաց թուահամարներն աւե-
լի նատի և ճանր թուանշաններով :

Մեր աւանդած հրահանգաց մէջ ջանացինք ըստ կարի
ամփոփել յ , օ , է , ւ , գ , տառերու ուղղագրութիւնը .
ի հարկէ ըրածնիս փորձ մ'է որ առանց պակասութեան չ'է
կարող լինել , կ'առաջարկենք մեր յարգելի ուսուցչաց որ օ-
գուտ քաղելով մեր առաջարկած հրահանգներէն՝ պատուի-
րեն աշակերտաց որ իրենց ընդհանուր տեարակներուն մէջ
յ , օ , է տառերով գրուողբառերուն այրբենական աղիւսա-
կը պատրաստեն : Այդ աղիւսակը շինելէ յետոյ՝ ուսուցիչը
պէտք է հսկէ որ եթէ այդ տառերով գրուած ո ե բառ
հանդիպի աշակերտաց որ մեր տուած հրահանգաց մէջ յիշ-
ուած չ'ըլլայ , նորա ուղիղլինելն ստուգելէ յետոյ . աւելցը-
նեն իրենց շինած աղիւսակին վրայ : Մենք կարծենք որ
այդպիսի դիպուածներ շատ շեն կրնար պատահիլ . այ-
սու ամենայնիւ եթէ մեր ուսուցիչները ցփերջ տարւոյ ի-
րենց աւելցուցած բառերու աղիւսակը շնորհ ընեն մեզ ու-
ղարկել , մեծապէս կը պարտաւորեն զմեզ : Մարդ մ' , որ-
քան ալ աշխատի , մշակուած աղիւրներ չ'ունենալով աչքի-
առջեւ , չէ կարող ըստ ամենայնի կատարեալ և պակասու-
թենէ զերծ գործ մը յառաջ բերել : Թող մեր յարգելի ու-
սուցիչները փոխանակ այսպիսի նոր ձեռնարկութեան մէջ
թերութիւններ պրպտելու , բարեհամին իրենց խոհեմ դի-
տողութիւններով նպաստել մեզ , եթէ կ'ուղեն ազգային
դաստիարակութեան օդտակար ծառայութիւն մը մատու-
ցանել :

Անաշառ և ճշմարիտ քննադատութենէ ոչ միայն շենք
խորչիր այլ նաեւ շատ բան կ'ակնկալենք :

Ա. Ա. Բ Կ Ա Յ

Մարդու հինգ արտադին զէոյուրանի ունի՝ պեսանելէտ , լունլէտ ,
հորոգելէտ , հաշուիլէտ և ջշուիլէտ :

Ա . Դասաւոան մէջ մենք կը տեսնենք՝ աշակերտ ,
վարժապետ , սեղան , աթոռ , նստարաններ , գրասե-
ղաններ , գրատախտակ , գարետախտակ , լուսամուտ-
ներ , դուռ . . .

Տան մէջ կարող ենք տեսնել՝ հայր , մայր , քոյր ,
եղբայր , սենեակներ , իսկ սենեակներու մէջ . . .

Բ . Անձրեւ գալու ժամանակը կը լսենք՝ որպտում ,
քամիներու շնչիւն , մոնչիւն , եկեղեցւոյ մէջ՝ դպիր-
ներու երգեցողութիւն , քահանայներու ընթերցա-
նութիւն , զանդակի հնչիւն , զօղանջիւն , դաշտի վրայ՝
սոխակի գայլայիկ , թուչուններու ճռուողիւն , արօ-
տատեղիներու վրայ . . . անտառի մէջ . . . լեռներու
վրայ . . . փողոցներու մէջ . . .

Գ . Ճաշակելով մենք կարող ենք ճանաչել աղը ,
շաքարը , գինին , քացախը , ջուրը , թէյը , սուրճը ,
կաթը , մածունը . . .

Դ . Հոսուտելով կը ճանաչենք՝ վարդը՝ մեխակը ,
ուհանը , շուշանը , մանուշակը , խունկը , կնդրուկը . . .

Ե . Շօշափելով կը ճանաչենք՝ գնդակը , բամբակը ,
վետուրը , բուրդը , ձիւնը , հացը . . .

Ա . Հինգ զգայարանքներու միջնորդու-
թեամբ ճանաչուած բաները կը կոչուին սուրէտ , ։
Աշակերտ , հայր , քոյր , երգ , շաքար , բամ-
բակ , վարդ և լուսապարկայ են :

Վարժութեան 1. Ի՞նչ առարկայներ կը տեսնենք ե-
կեղեցւոյ մէջ, դաշտի վրայ, անտառի մէջ, փողոցի
մէջ, գետի մօտ, արտերու մէջ և գոմերու մէջ։

Ի՞նչ առարկայներ կը շինուին փայտէ, երկաթէ,
կաւէ, պղնձէ, ապակիէ։

Ի՞նչ առարկայներ կ'ուտենք, ի՞նչ կը խմենք. ի՞նչ
կը հագուինք։ — (Բերանացի)։

2. Կան առարկայներ, որոնք մի քանի
մասերէ բաղկացած են։

2. Որո՞նք են սեղանի, լուսամուտի, ծառի, կո-
վի, հաւի մասերն. Ի՞նչ մասեր ունի գլուխը, իրա-
նը, ոսները։ — (Բերանացի)։

3. Մարդս առարկայներուն զատ զատ
անուններ կուտայ. իւրաքանչիւր առարկայ
իւր անունն ունի։ Առարկայի մասերն եւս
զատ զատ անուններ ունին։

Մարդս այն ժամանակ առարկային ա-
նունը կուտայ, երբ իւր տեսածի և ճառչէ
մասին ուրիշներուն բան մը ուզէ լսել։

Առաջին կը տեսնենք և կը զննենք մեր
հինգ զգայարանքներով. իսկ առաջ չենք կա-
րող տեսնել և գննել. միայն կը լսենք զայն
և կը հասկնանք։ Առարկայներու անուն-
ներն մեր տեսողութեան ենթարկելու հա-
մար կը գրենք զայնս, այսինքն տառերով
կը նշանենք։

3. Վերոյիշեալ երկու վարժութեանց պատաս-
խանները գրաւոր ներկայացուցէք՝ առաջ ամբողջ ա-

ռարկայներու անունները գրեցէք, յետոյ անոնց մա-
սերուն անունները։

ՇՆՋԱԽՈՐ ԵՒ ԱՆՇՈՒՆՉ ԱՌԱՐԿԱՅԱՑՆԵՐ

Ա. Ոչխար, շուն, կատու, ձի, հաւ, կով, գո-
մէշ, աշակերտ, քահանայ։

Բ. Սեղան, քար, աթոռ, փայտ, կերակուր, այ-
գի, գերք, եկեղեցի։

4. Առաջին տողին վրայ նշանակուած
բառերն՝ կենդանի առարկայներու անուն-
ներն են. որք կարու և ուշտիւոււ իւրեանց ա-
զատ կամքով. դոքա նշանը առարկայներ են։

Երկրորդ տողին վրայ նշանակուած բա-
ռերը ակնաբան առարկայներու անուններն են.
որք իւրեանց ազատ կամքով չեն կարող տե-
ղափախուիլ. դոքա նշանը առարկայներ են։

4. Ի՞նչ չնշաւոր առարկայներ կը տեսնեք տան մէջ,
բակի մէջ, գոմի մէջ, անտառի մէջ։

Ի՞նչ անշունչ առարկայներ կը տեսնեք դասատան
մէջ, պարտէզի մէջ, այգիի մէջ, դաշտի վրայ, ու-
սումնարանի և եկեղեցւոյ մէջ։ — (Բերանացի)։

5. Հետեւեալ բառերէն զատեցէք և գրեցէք ա-
ռաջ չնշաւոր առարկայներու անուններն, յետոյ ան-
շունչներունը. — Կացին, գիւղացի, սղոց, գարբին,
հովիւ, մուրճ, աղախին, նիգ, բանալի, ծառայ, ա-
ղանի, խոզ, հաւ, բոյն, գամ, այգի, այգեպան,
հաց, հացթուխ, սրահ, գոմ, ձի, կով, եղ, ոչխար,
օրօրոց, մանուկ, անկողին, մահճակալ, զգեստ, գեր-

ձակ, ասեղ, կօշկակար, կօշիկ, սիսեռ, կաղամբ, համեմ, կարմրախայտ, լոր, մեղր, մեղու, ծանճ, ծառ, բղեղ, խոտ, հնձող, մանդաղ, ձեռք, ոտք, աչք, այծ, սադ, բադ, եղջիւր, եղջերու, աղուէս, միս, պանիր, աքաղաղ, նապաստակ.

6. Հետեւեալ օրինակներու մէջէն զատեցով գրեցէք նախ անշունչ առարկայներու անունները, յետոյ շընչաւորներունը: — Թայլը՝ կը կերակրեն իւր ատամերը, իսկ բաղէն՝ կտուցն ու մագիլները, զին կը պաշտպանուի սմբակներով, գոմէշը՝ եղջիւրներով, շունը՝ ատամերով, կատուն՝ ճանկերով, մեղուն՝ խայթոցով:

Հաւը խօսեցաւ. օրը բացուեցաւ, արեւն ալ շատոնց ելաւ բարձրացաւ: Խելօք մանուկներ, շուտ շուտ հագուեցէք, շուտով դասատան մէջ դուք հաւաքուեցէք: Մարդ և անասուն, դազան և թռչուն, ամենքն ալ իւրեանց գործին կը փութան: Մրջիւնը բերնով կերակուր կը տանի, մեղուն կը ծծէ անուշ հիւթ ծաղկէն: Դաշտը գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած, մարդերը կանաչ զգեստներ հագած, անտառը ձմեռուան քնէն արթնցած՝ իւր տերեւները կը շարժէ մեղմիկ:

Զինորանները իրենց ուռկանները կը ձգեն, հնձողներն իրենց մանդաղները կը շարժեն: Դուք եւս մանուկներ առէք ձեր գիրքեր, Աստուած ծուլութիւն երբէք չ'սիրեր.

ՄՑԱՒՈՐ ԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅՆԵՐ

Ա. Հոգի, հրեշտակ, Աստուած, ապրուստ, եռամնդ, աշխոյժ, աշխատանք.

Բ. Արօր, սեղան, աքաղաղ, մարդ, բաժակ, ալիւր, կաքաւ, կաղամբ.

5. Առաջին կարգին մէջ նշանակուած առարկայները թէեւ կան և անուն ունին, բայց մեր հինգ զգայարանքներուն ենթակայ չեն. զայնս մեք միայն հրաւու կը ճանաշենք և կ'ըմբռնենք: Դոքա հրաւու առարկայներ են:

Երկրորդ կարգին մէջ նշանակուածներն՝ նշաւոր և անշունչ առարկայներ են. զայնս կը ճանշնանք մեր հինգ զգայարանքներու միջնորդութեամբ: Դոքա կը կոչուին նաեւ նէւնուկան առարկայներ, որովհետեւ որ և իցէ նիւթէ կազմուած են:

7. Հետեւեալ խօսքերու մէջէն զատեցէք մտաւոր առարկայները նիւթականներէն, նիւթականներն ալ երկու խումբի բաժնեցէք— նշաւոր և անշունչ:

Աստուած ստեղծեց մարդը և տուաւ անոր միտք, զգացմունք և կամք, որպէսզի կարենայ իւր սեպհական խելքովը իրեն համար ապրուստ ճարել. Մարդ հնարեց արօրը, վարեց երկիրը, սերմել ցանեց, կացին հնարեց և վառելու համար փայտ կտրեց, սանձ ու թամբ հնարեց և իրմէ աւելի ուժեղ կենդանիները հնազանդեցուց, միտք բանեցուց, և շատ անասուններ, գործիներ ու կազմածքներ ունեցաւ: — Բարի մարդը իւր կարողութեան չափով աղքատին՝ փող, ծարաւիին՝ ջուր, քաղցածին՝ հաց, և մերկին՝ զգեստ կուտայ: Աստուծոյ հրեշտակը կ'օդնէ բարի մարդուն:

(Բերանացի՝ գրաւո՞ր):

ԱՌԱՐԿԱՑԻՆ ԹԻՒԲ

Ա. Հաց, քար, ծառ, պատ, ճրագ, աղ, մազ, կացին, սեղան, աշակերտ, կերակուր, եկեղեցի, քահանայ, մատանի:

Բ. Հաց-եր, քարեր, ծառեր, պատեր, ճրագներ, աղեր, մազեր:

Կացին-ներ, սեղաններ, աշակերտներ, կերակուրներ, եկեղեցներ, քահանայներ, մատանիներ:

6. Առաջին երես տողերուն մէջ եղած բառերէն իւրաքանչիւրը մէյմէկ առարկայի անուն է — մի հաց, մի քար, մի կացին, մի եկեղեցի:

Երկրորդ երկու տողերուն մէջ գտնուած բառերէն իւրաքանչիւրը անէ միատեսակ առարկայի անուն է — շատ հացեր, շատ քարեր, շատ կացիններ, շատ եկեղեցիներ:

Եր և ներ մասնիկները բառերուն ծայրը աւելցնելով՝ առարկային մէկէն աւելի լինելը ցոյց կուաան :

8. Հետեւեալխօսքերէն մէկ առարկայ ցոյց տուող անունը զատեցէք շատ ցոյց տուողներէն: Հայրս շուկայ գնաց և գնեց միս, հացեր, հաւեր, բադ և հնդկահաւեր, Աշակերտները կաւիճ գնեցին և գրատախտակի վրայ դասերնին գրեցին: Դիւզացիք արտերը վարեցին: Քահանայները եկեղեցւոյ մէջ ժամերդութիւն կատարեցին: Դաշտին վրայ կ'արածուեին

կովեր, եղներ, այծեր, ոչխարներ և ուրիշ շատ կենդանիներ: Դարբինը կը շինէ կացին, բահ, խոփ, մանգաղ, ուրագ և ուրիշ բաներ: Ջուլհակը շալ դործեց, բրուտը՝ շինեց կուժեր, սրուակներ, գաւաթներ: Հաւը ձու կ'ածէ, կովը կաթ կուտայ, աշակերտը գնեց զիրք, մատիտ, կանոն, գրիչ, կաղամար: Հայ՛ը պայուսակ ունի: Արամը կարկին չ'ունի: Բոլոր աշակերտները կանոններ ունին: Աշակերտներէն և ոչ մէկը տողաշար ունի:

(Բերանացի՛ զրաւո՛ր):

9. Բոլոր զատուած առարկայները փոփոխեցէք, մէկը շատի վերացնեցէք, շատը մէկի—հետեւեալ կարգաւ: Հայրս—Հայրերնիս, շուկայ—շուկաներ, հացեր—հաց ելն:

ԱՌԱՐԿԱՑԻ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ

Ա. Կարմիր խնձոր, սպիտակ շաքար, թթու քաշխ, սեւ թանաք, կապոյտ ծաղիկ:

Բ. Ոսկի մատանի, քարաշէն եկեղեցի, արարական ձի, հիւսիսային եղներու, առաւօտեան հով:

7. Առաջին և երկրորդ տողերուն մէջ նշանակուած բառերը՝ կարմիր, սպիտակ, արարական, հիւսիսային . . . ո՛չ առարկայներու և ո՛չ նոցա մասերու անուններն են: Նոքա դրուած են առարկայներու համար և կը ցուցնեն անոնց որդեսունեալ կամ յառկան:

8. Մարդս իւր զգայարանքներու միջնոր-

դութեամբ ոչ միայն առարկայները կը ճանաչէ, այլև նոցա բարձրանեն (այսինքն թէ առարկայն է՞ւ ե՞ւ) :

Որպիսութիւնն, ալ առարկայի պէս իւր անոնք ունի :

10. Հետեւեալ օրինակներու մէջէն զատեցէք նախ և առաջ առարկայներու, յետոյ նոցա որպիսութեանց անունները .— Աեւ կուպր, կարմիր գինի, կանաչ խոտ, պայծառ արեւ, փայլուն աստղ, կապոյտ երկնակամար, փայտեայ կլոր գաւաթ, անտառային թթու խնձոր, դաշտային խորամանդ աղուէս, փոքրիկ երկչոտ նապաստակ, թունաւոր սեւ օձ, եղջերաւոր խոշոր անսատուն, հարաւային տաք քամի, հիւսիսային սառնաբեր փոթորիկ, պողպատէ սուր մանդաղ, քարայտակ լայն ուղի, ծուռ նեղ շաւիղ, հին խոր ջրհոր, տերեւաշատ խիտ անտառ, քառակուսի վայելուչ սեղան, բրդէ փափուկ գուլպայ, արծաթէ փայլուն դրամ, պարսկական թանկագին գորգ :

11. Որպիսութիւն ցուցնող անուններու տակը գիծ քաշեցէք .— պայծառ երկնակամարի վրայ գորշագոյն ամպեր երեւցան, Ամպերը թանձրացան և սեւ քողով ծածկեցին կապոյտ երկինքը . Երեկոյին կենաստու անձրեւը ջրեց ծարաւի երկիրը . Դաշտային թառամած բոյսերը զուարթացան . նոքա իրենց բարակ արմատներով թաց հողին մէջէն ծծեցին մննդարար հիւթը . Ցորենի և գարիփ արտերը իրենց քստալի հասկերու նիշար հատիկները լեցուցին կշտացուցին :

12. Հետեւեալ առարկայներու քով դրէք իրենց պատշաճ որպիսութեանց անունները .— Ամպ, գունտ,

շուն, թիթեռ, խնձոր, ջուր, կապիկ, ապակի, քամի, գրիչ, անիւ, խուրձ, խոտ, արեւ, ոսկի, արծաթ, ածուխ, քար, բամբակ, հաց :

9. Միևնոյն առարկայն կարող է նաև քանի մը որպիսութիւն ունենալ : — Կառաւ, ուեւեւափէր, բաղմանիւղ, ճիւն, սոսուերալար ուռենի :

13. Ի՞նչպիսի յատկութիւններ կարող են ունենալ հետեւեալ առարկայները՝ ճանապարհ, տուն, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, ջուր, շաքար, ապակի . — (Բերանացի՛ և գրաւո՛ր) :

Ի՞նչ յատկութիւններ կարող է ունենալ մարդս : — (Բերանացի՛ և գրաւո՛ր) :

10. Քանի մը առարկայներ կարող են միևնոյն որպիսութիւնն ունենալ . — Ֆառար գայլ, ֆառար աղուէս, ֆառար մարդ, ֆառար գործ : Բարձր ձայն, բարձր ծառ, բարձր մարդ, բարձր արժանաւորութիւն :

14. Հետեւեալ որպիսութիւնները ի՞նչ առարկաներու կարելի է յատկացնել . — Կարմիր, սպիտակ, սեւ, կանաչ, կապոյտ, քաղցր, գառն, սուր, պինդ, փափուկ, կլոր, հիւթալի, թափանցիկ, ծանր, թեթեւ, մաքուր : — (Բերանացի՛ գրաւո՛ր) :

15. Ի՞նչ առարկայններու կարելի չէ յատկացնել հետեւեալ յատկութիւնները՝ վիրաւն, դիւրավառ, դիւրաբեկ, հոտաւէտ, ցամաք, կոկ, եռանկիւնի, տափակ, բարի, օդտակար : — (Բերանացի՛ գրաւո՛ր) :

16. Ինչպիսի որպիսութիւններ կարելի չէ յատկացնել հետեւեալ առարկայներուն, արեւ, ածուխ,

գայլ, նապաստակ, կրակ, քար, շաքար, փետուր,
աղուէս, օձ: — (Բերանացի' և գլաւո՞ր):

17. Ξεισειτεωλ απωρηκαγνερετην ήτραφανδζιτρε
ζηντηναθιτερετην αναψωτεδωπ ψετωφ έ πενθεναη,
αποψηρ, αψισπηρε, αρδαθηρ, πακην, αηγηνδρ, γητεγωνρ,
μανπιτζακρ, γωνητακρ, φετηθηηρε, δηψηη γηηρε,
ρωμηρωκρ, αρδηδερ, Μηηρε, φωγωκρ: — (βερανηαγηή,
αψω φηηωηηρε).

ապա գրաւո՞ր)։
18. Ի՞նչ առարկայիներ գիտէք, որոնք միշտ հետեւեալ յատկութիւններն ունին. ուժեղ, վասակար, օդտակար, ամուր, կակուղ, հոստաւէտ, դիւրաբեկ, դիւրավավառ, անուշ, գառն, կարմիր, սպիտակ, հոսանուտ: — (Բերանացի՛. գրաւո՞ր):

19. Գրեցէք այնպիսի որպիտով թե անց անուններ,
զորս կը ճանաշենք՝ տեսանելիքի, լսելիքի, ճաշակե-
լիքի, հոտոտելիքի և շշափելիքի մշջորդութեամբ։

20. Անուանեցէ՛ք այնպիսի որպիսութիւններ, ո-
րոնք կը ցուցնեն առարկային գոյնը, ձեւը, նիւթը,
ո՞ր տեղոյ և ո՞ր ժամանակի լինելը: — (Բերանացի՛):

21. Որպիսութիւն ցուցնող բառերու տակը գիծ
քաշեցէ՞ք : — Անձրեւային աշուն . աշնանային անձրեւ :
Փոթորկալի ծով, ծովային փոթորիկ . Դաշտային ծա-
զիկ, ծաղկաւէտ դաշտ . Անձրեւոտ ամառ, ամարա-
յին անձրեւ . Մարդկային արժանաւորութիւն, ար-
ժանաւոր մարդ : Կենդանական բնութիւն, բանական
կենդանի :

Համ : Պողպատէ , սուր , շողշողուն և կարեւոր , կա-
նաչ յինած , կարմիր գործած , սէւ կտրած *) :

Գարնան դաշտի մէջ տեսայ մի ծաղիկ,
Կանաչ թերթիկ ունէր և կապոյտ աշուիկ։
Խոտերու մէջ հազիւ նա կը տեսնուէր,
Համեստ կերպարանք՝ սիրուն հոտ ունէր։

ԱՐԳԻՍՈՒԹԵԱՆ ԹԻՒԾ

Ա. Կարմիր խնձորներ, երկար կանոններ, սպիտակ թղթեր, կանաչ յուլունքներ, գիւղացի մարդիկ, դաշտային բնակիչներ.

Բ. Կարմիր-ները, երկարները, սպիտակները, կա-
նաչները, գիւղացիները, դաշտայինները:

14. Ωραϊθιουτθիւն ցուցնալբառերը թիւ
շունին եթէ առարկայի մօտ գրուած են.
բայց եթէ առանձին են, կը նան առարկայնե-
րու անուան պէս եր, և և + մասնիկները իբ-
րեւ վերջաւորութիւն առնուլ՝ և շատի հա-
մար գործածուի :

23. Հետեւեալ օրինակներու մէջ գտէք առանձին գործածուած որպիսութիւնն ցուցնող բառերը և տակերը դիմ քաշեցէք: — Հայրս զնեց գեղեցիկ գրեչներ . անսուց մէջէն փոքրները ես առի, իսկ մեծերը քրոջս տուիր: Մայրս մեզի համար թարմ խմորեղէններ եփեց . ինձ տուաւ մեծը, իսկ եղրօրս փոքրը: Հիւանդները կը նախանձին առողջներուն: Հարուստ-

^{*)} *Ung., ukr.—mnp.*



ները պարտաւոր են օգնել աղքատներուն։ Գիտուն-ները տգէտներուն կ'ուսուցանեն։ Օրէնքը կը պատժէ շարերը։ Քրիստոս կը ներէր մեղաւորներուն, կը բժշ-կէր կաղերը, կյորերը, անդամալոյները, բորոտները և դիւահարները։ Աստուած կը խնամէ որբերը, Կանչ ու կոյրը սրբնթաց առուակէ մը պիտի անցնէին։ Վարդերու մէջ ես կը սիրեմ կարմիրները։ Քաղաքացիները թէեւ շատ անդամ կը ծաղրեն գիւղացիները, բայց եթէ գիւղացիները չ'լինէին, հաւատա՛, քաղաքացիները սովամահ կը կորնչէին։

ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Եռնը կը հաջէ։ Եռնը փախաւ։ Եռնը կը խած-նէ անցորդը։ — Թռչունը կը թռչի։ Թռչունը կը խա-ղայ։ Թռչունը կ'երգէ, բոյն կը շնէ, ձագ կը հանէ, ձագերը կը կերակրէ, մեղներ կը բռնէ։

12. Հաջեւ, Բուժեւ, Երիւեւ, ևլն, ո՛չ առարկայ-ներու անուններ են և ո՛չ որպիսութեան։ Նոքա միայն կը ցուցնեն թէ առարկայն ի'նչ կ'ընէ, ի'նչ կը գործէ։ Պոքա հաւատունեւ ցոյց տուող բառեր են։

Առարկայի գործողութիւնն ալ մարդս կը ճանաչէ իւր հինգ զգայարանքներու միջ-նորդութեամբ։

13. Գործողութիւնն ալ որպիսութեան պէս առանց առարկայի կարող չէ լինել։ Որպիսութիւնը կը ցուցնէ թէ առարկայն

ի'նչպէս է, իսկ գործողութիւնը — թէ նա չ'ու կ'ընէ։

14. Ինչպէս որ առարկայներն և իրենց որպիսութիւնները, այնպէս ալ առարկայ-ներու գործողութիւնները զատ զատ բա-ռերով կը նշանակենք։

24. Հետեւեալ խօսքերու մէջ գտէք գործողու-թիւն ցոյց տուող բառերը և անոնց տակը գիծ քա-շեցէք։ — Որսորդն սպաննեց գայլ մը։ Գայլը բզքտեր էր հոգուին ոչխարները։ Կարապետը առաւօտները կ'ենէ, զգեստները կը հագնի, երեսը կը լուանայ, աղօթք կ'ընէ և առաւօտեան հացը կ'ուտէ ու դաշտ կ'երթայ։ Փոքրիկ տղայները ուսումնարան կ'երթան։ Զին բնուն կը կրէ։ Օձը կը սողայ։ Զուկը կը լողայ։ Թռչունը կը թռչի։ Արծիւը կը սլանայ օդին մէջ։ Գե-տը կը հոսի։ Վամին կը շնչէ։ Ամպը կ'որոտայ։

25. Գտէք առարկայի անունը, որպիսութեան ա-նունը և գործողութիւն ցոյց տուող բառը։

Լուսին, լուսին ծագեր է,
Գիշերահարմ ելեր է,
Կապոյտ ամպեր հագեր է,
Ճերմակ քօղեր ձգեր է.
Եկեք քուրիկ պար բռնենք,
Զքնաղ լուսին դէմ կայթենք։

Անձրե՛ւ, անձրե՛ւ ցած արի,
Բացո՛ւր ցորեն ու դարի.
Բացո՛ւր ծաղիկ, կանաչ խոտ,
Սըրէ՛ փոշին, մաքրէ՛ օդ։

26. Հետեւեալ բառերէն իւրաքանչիւրին մօտ աւելցուցէք մի յարմար գործողութիւն։ — Դարբին . . . հնձող . . . ուսուցիչ . . . գերձակ . . . խոհարար . . . ձկնորս . . . հիւսն . . . որմնադիր . . . ներկարար . . . տակառագործ . . . բրուտ . . . որսորդ . . . քահանայ . . . վաճառական . . .

27. Արտագրեցէք նախ գործողութիւն ցոյց տուող տուերը, յետոյ առարկայներու անունները։ — Գիւղացին կը մաքրէ վարելահողը, կը վարէ օրավարը, կը սերմանէ և Աստուծմէ կը խնդրէ որ ժամանակին տայ արեւ, անձրեւ և օրհնէ իւր վաստակը։ Գիւղացին կ'երթայ պարտէզ, հողը կը մշակէ, մարդերը կը յարդէ, բանջարներ կը ցանէ և պարտէզին շուրջը ցանդարէ, կով կը պատէ, որպէսզի անսասունները ներս չ'մանեն, կը պատէ։

28. Ի՞նչ կ'ընէ գիւղացին ամսուր, աշնան, ձմեռ, գարնան . . .

29. Իւրաքանչիւր առարկայի մօտ դրէք իւր յարմար գործողութիւնը և աւելցուցէք թէ առարկայն ի՞նչ բան կը շինէ և ինչո՞վ։ — Հացագործը հացը կը ի՞նչ բան կը շինէ պայտեր . . . կօշկակարը . . . պատրաստէ ալիւրէ, — Քոյրս կը կարէ շապիկներ քթանէ, Դարբինը կը շինէ պայտեր . . . կօշկակարը . . . պղնձագործը . . . ոսկերիչը . . . նկարիչը . . . խոպանագանը . . . ջրաղացպանը . . . գերձակը . . . հիւսնը . . . հարարը . . . ճարտարապետը . . . ջուլհակը . . . որմնադիրը . . . ճարտարապետը . . . հնձողը . . . ձկնորսը . . .

15. Մի առարկայ կարող է քանի մը տարեր գործողութիւններ կատարել։ —

Գիւղացին Քերայուց մանգաղը, հնայ դաշտը և ձիու համար խոտ հնայեա : Մանուկները ժամանակն իրենց գրքերը, չերեւէցին պայուսակի մէջ և հնացին վարժարան։

30. Հետեւեալ առարկայներէն իւրաքանչիւրին տուեք քանի մը յարմար գործողութիւններ։ — Զին, կովը, ոչխարը, հաւը, աքաղաղը, կատուն, շունը, գայլը, ագուաւը, ծիծեռնակը, սոխակը, կկուն, մեղուն, խոզը, աղաւնին, գորտը, բադը, թռչունը, ձուկը, օձը, մարդը . . . — (Բերանացին գրաւո՛ր)։

31. Ի՞նչ գործողութիւններ կը կատարենք ձեռներով, ոտներով, քթով, ականջներով, բերանով . . . — (Գրաւո՛ր)։

16. Միւլնոյն գործողութիւնը կարելի է զանազան առարկայներու միջոցաւ կատարուիլ։ — Չուկը և Եւշու, գորտը և Եւշու, բադը և Եւշու, մարդն ալ և Եւշու։

32. Ի՞նչ առարկայներու կարող ենք յատկացնել հետեւեալ գործողութեանց իւրաքանչիւրը։ — Լոյս կուտայ (ճրագը լոյս կուտայ, կրակը լոյս կուտայ, լուսինը լոյս կուտայ, աստղերը լոյս կուտան, արեւը լոյս կուտայ)։ Կ'արթնայ, կը թռչի, կը բառաչէ, կը մայէ, կը հանդչի, կ'ոռնայ, կ'որոտայ, գուրս կ'եւնէ, մայրը կը մտնէ, կը վառի, վար կ'իյնայ, կը փայլի, կը ծաղկի, կ'աճի, կը մեռնի։

33. Հետեւեալ բառերէն որո՞նք ցոյց կուտան առարկայ, գործողութիւն և որպիսութիւն։ — Մշակ, մշակել, մշակող, մշակութիւն։ Կոտրեցի, կոտրած,

կտոր։ Փշրանք, փշրուն, կը փշրէր, կերակուր, կերող, կերած, կերեր եմ, կը գրեմ, գիրք, գրութիւն, գրիչ, գրող, Ըմպելիք, խմեցի։ Խելք, խելօք։ Խաղ, խաղալ, խաղասէր, խաղալիք։ Ծամել, ծամելիք։ Կար, կարած, կարող, կարկատան, կարեց, Հնձել, հունձ, հնձող։ Զայն, ձայնաւոր, ձայնել, անձայն։ Ճանապարհ, ճանապարհորդ, ճանապարհորդութիւն, Մանուկ, մանկական, մանկանալ, Յիշատակ, յիշել, յիշող, յիշատակարան։ Յիշողութիւն, յիշեցի, յիշեալ։ Ներել, ներողամիտ, ներողութիւն։ Շնորհ, շնորհել, շնորհած, շնորհաւորող։ Զար, չարանալ, չարութիւն, չարչարանք, չարչարուիլ։ Սուր, սրոց, սրել։ Ուժ, ուժեղ, ուժեղանալ։

34. Կոշկակարը մեծ մեծ կօշկներ կը կարէ։ Դերձակը ձեւեց գեղեցիկ բաճկոնակ։ Բարի քահանայն օրհնեց աշխատասէր տղան։ Գիշեցիկ գիւղ, Գիւղաղական փոքրիկ պարզ եկեղեցի։ Եկեղեցական գգեստ, Գթասիրտ մարդն օգնեց տնանկին։ Մարդկային գութը կը շարժի՝ թշուառը տեսնելով։ Բարի հոդի ունի մեր դրացին։ Մեր դրացւոյն հոդեկան բարութենէն մարդիկ օդուտ կը քաղեն։ Զգալի ծանրութիւն։ Մանր զգ ացմունք։ Օրինաւոր պաշտօն։ Պաշտօնական օրէնք։

ԹԻՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ

Ա. Ես կ'ընթեռնում։ Դու գրեցիր։ Հնձողը հնձեց։
Բ. Մենք կ'ընթեռնուն-+։ Դուք գրեցի-+։ Հնձողները հնձեց-ի։

17. Առաջին տողի մէջ գործ կատարող

առարկայները մէկ—մէկ են, նոցա կատարած գործողութիւնն ալ մէկ է—։ Հ անդամ և կատարում։ Երկրորդ տողի մէջ գործողները շատ են։ Նոցա կատարած գործողութիւններն ալ շատ են—+։ Հ անդամ և կատարումն։

Գործողութիւնն ալ առարկայի և որպիսութեան պէս կարող է մէկ և շատ ցոյց տալ։ Գործողութիւնը շատցնելու համար՝ վերջաւորութեանը վրայ կ'աւելցնենք և + տառերը միայն կամ ուրիշ տառերու հետ։

35. Հետեւեալ օրինակները փոփոխեցէք այնպէս որ առարկայներն ու գործողութիւնները մէկն աւելից տան։ — Աշակերտը կ'ընթեռնու իւր դասը։ (Աշակերտները կ'ընթեռնուն իրենց դասերը)։ Կովը կ'արածի դաշտին մէջ։ Թուչունը կ'երգէ իւր քաղցրահնչիւն երգը։ Որմնադիրը կը շինէ պատը։ Վարժապետը սովորեցուց աշակերտին։ Աշակերտը լոեց վարժապետին ըսածը, Քահանայն մկրտեց մանուկը։ Մանուկը մեծցաւ, ուժովցաւ և իւր հօր օգնող եղաւ։ Ամառն ես գիւղ կ'երթամ, աշնան կրկին կը վերադառնամ։ Գարնան ծառը կը ծաղկի, ամառը պտուղը կը մեծնայ, իսկ աշնան զայն կը քաղեմ, մի մասը կուտեմ, իսկ միւս մասը կը պահեմ։ Զմեռը գիւղացին գործը կը պակախ, բայց նա պարապ չ'մնար։ Գիւղացին պարապ մնալ չ'սիրեր։

36. Հետեւեալ օրինակներու մէջ բոլոր առարկայները ու անոնց գործողութիւնները այնպէս փոփոխեցէք որ մէկը շատի վերածուի, և շատը մէկի։ —

Հացը կը թխեն տանտիկինները կամ հացթուխները .
(Հացը կը թխէ տանտիկիննը և լու) . Հացը կը թխեն խմորէ , Խմորը՝ ալիւրէ , ջրէ և խաչէ կը պատրաստուի : Ալիւրը ցորենէն կաղան ջրաղացի մէջ : Ցորենը հասկերու մէջ կը համնի արտերու մէջ . Գիւղացիները դաշտը կը մշակեն . նոքա կը հերկեն հողը , կը ցելուն , յետոյ այդ ցելերուն մէջ ցորենը կամ ուրիշ հացահատիկներ կը սերմաննեն . իսկ Աստուած կ'ածեցնէ զայնս . Աստուած կ'ուղարկէ ամառը , ջերմութիւնը , անձրեւը և փայլուն արեւը :

18. Մեր սովորած բառերէն ոմանք առարկայի անուն են , միւսները որպիսութեան , իսկ ոմանք գործողութեան : Բառերէն կը հայուսէ իօս+ը :

37 . Հետեւեալ խօսքերը վերլուծեցէք և ըսէք իւրաքանչիւր բառի նշանակութիւնը . Փայլուն արեւը մայրը մոտաւ (փայլուն կը ցուցնէ արեւուն որպիսութիւնը , արեւը անշունչ և նիւթական առարկայի անունն է . մայրը մոտաւ՝ կը ցուցնէ արեւուն գործողութիւնը) : Լուսինն ալ արդէն գնաց ծածկուեցաւ : Փոքրիկ աստղերը ամսի տակ մոտան : Բարեպաշտ մարդիկ եկեղեցի գնացին : Ծոյլ մանուկները տունը մնացին : Աշխատասէր աշակերտները դասերնին կը սովորին : Աղօտ լուսինը կը լուսաւորէ քունի մէջ գըտնըւող երկիրը : Պայծառ աստղերը կը փայլին պարզ երկնքի վրայ : Սեւ սեւ ամսերը ծածկեցին երկնից երեսը : Գիշերը մժնցաւ : Վայրենի գաղանները արթընցան : Զար մարդիկ կը սիրեն խաւար գիշերը :

38 . Զատեցէք և կարդաւ գըտեցէք նախ առար-

կայի անունը , յետոյ որպիսութեան և ապա գործողութեանը . մնացած բառերը բաց թողուցէք . Սիրուն , անմեղ իմ գառնուկ , բուրդդ սպիտակ ու փափուկ , վազելով դաշտ , մօրդ քաշես դու կարօտ : Մի՛ լար , գառնուկ սիրական , փոքրիկ տղու դու նման , Կուգայ մայրդ՝ հետը շատ կը բերէ քեզ անուշ կաթ :

Ուռենի՛ սիրո՛ւն , ուռենի՛ դալար ,
ինչո՞ւ դու այսօր ուրախ չես ժպտիր .
Միթէ՞ քեզ սաստիկ արեւ տոչորէ ,
Արեւ տոչորէ և անձրեւ բախէ .
Արմատիդ մօտէն սառ ջուր չի՞ վաղէր :
Շատեր ես տեսայ որք սուր ի ձեռին ,
Ուռին կարեցին , կեանքէն զրկեցին :
Զայն տաշտըշեցին , սաստիկ քերթեցին
Եւ իրենց համար թիեր շինեցին ,
Նաւակ կազմեցին , մէջը նստեցան ,
Մէջը նստեցան , տուն վերադարձան
Եւ զիս ալ , փոքրիկս , հետերնին տարին :

Կրիստոնէւն . — Ի՞նչ կը ցուցնեն բառերը : (Բառերը կը ցուցնեն առարկայ , որպիսութիւն և գործողութիւն) . Ի՞նչ բանի առարկայ կ'ըսենք : Ինչպիսի՞ առարկայներ դիտենք : Որո՞նք են չնչաւոք և որո՞նք անշունչ առարկայներ : Որո՞նք են նիւթական և որո՞նք մոտաւոր առարկայներ : Առարկայի անունը շատ ցուցնելու համար ի՞նչ փոփոխութիւն պէտք է կրել տալ . ուրեմն որո՞նք են շատցնելու նշանները : Որպիսութիւն ցուցնող բառերը ինչո՞ւ կը դրուին . որպիսութիւնը առանց առարկայի կարո՞ղ է լինել . որպի-

սութեան անունը՝ շատը ցոյց տուած ժամանակը ի՞նչ
տառեր կ'ստանայ: Ինչո՞ւ համար կը դրուին գործո-
ղութիւնցոյց տուող բառերը : Գործողութիւնն առանց
առարկայի կարո՞ղ է լինել: Գործողութիւնը՝ շատը
ցոյց տառու համար , ի՞նչ փոփոխութիւններ կը կրէ :
Միւնո՞յն է արդեօք առարկայ և առարկայն ցուցնող
բառը , որպիսութիւն և որպիսութիւնը ցոյց տուող
բառը , գործողութիւն ու գործողութիւնը ցոյց տուող
բառը : Ի՞նչ կը կազմուի բառերէն :

Բ Ա. Ռ Ե Խ Վ Ա Ն Կ

19. Առարկային , նորա որպիսութեանը
և գործողութեանը մարդս առանձին ա-
ռանձին անուններ կուտայ: Առարկայի , գոր-
ծողութեան և որպիսութեան անունները
կը կոչուին բառեր:

Բառերէն կը կազմուի խոսք: — Յորենը հասեր է : Հա-
սած ցորենը կը հնձեն մանդաղով: Հնձած ցորենը կա-
լերու մէջ կը կասեն: Յորենը կը կասեն կամներով:

Ա. Հաց , ծառ , քար , ջուր , ցուրտ , սեւ , լսւ ,
մամ , միս , չէկ , գալ , տալ :

Բ. Բաժակ , գարի , ցորեն , բարակ , հասակ , սի-
րուն , սպիտակ :

Գ. Բարեկամ , աշակերտ , աշխատել , աշխատու-
թիւն , աշխատասիրութիւն :

20. Առաջին տողի մէջ նշանակուած
բառերը միանգամով կը կարդացուին . Երկ-

րորդ տողի մէջ նշանակուածները երկու
անգամով , իսկ երրորդ տողինը երեք և ա-
ւելի անգամով :

Բառի այն մասը որ միանգամով կ'ար-
տասանուի՝ վճակ կը կոչուի :

39. Հետեւեալ խօսքերը տետրակի մէջ օրինակե-
ցէք՝ բառերը վանկերու բաժնելով :

Գիրք , մէջը քաղցը միրդ : Ովկը կարդայ , նա մարդ
կ'ըլլայ : Ովկը խաղայ , նա կը կաղայ : Ովկ կ'աշխա-
տի , նա կ'ուտէ : Խմացողին մին , չ'խմացողին հաղար :
Աղու հաց , սիրտը բաց : Հացու պանիր , կեր ու բա-
նէ : Հացի կտրածը , թուրքը չի կտրեր :

Քարետախտակը , քարեգրիչը , թանաքամանը ,
կանոնը , գասական առարկայներ են : Գլուխս կըտ-
րեցին , սրտիկս հանեցին , գինի խմցուցին , լեզուա
բացուեցաւ , խօսիլ սկսաւ : Գանի որ ծեծը կ'ուտէր ,
ուրախութեամբ կը պտրտէր . երբոր ծեծը վերջացաւ
ինկաւ գետին ու մեռաւ :

21. Վանկերու թուին նայելով՝ բառերը
կը լինին միավանկ , երկավանկ և բազմա-
վանկ :

40. Կարդաւ գրեցէք նախ միավանկ , յետոյ եր-
կավանկ և ապա բազմավանկ բառերը : Մառ , կալնի ,
լորենի , կեռասենի , ընկուղենի , թուղ , թղենի ,
թութ , թթենի , սալոր , սերկեւիլ , խաղող , նուշ ,
ձի , գարի , գարուն , Գարեգին , գաւաղան , հիւանդ ,
բժիշկ , բարեկամութիւն , գիրք , գրատուն , գրա-
վաճառ , հաց , հացագործ , գաթայ , գութան , ա-

բօր, արօտ, հօտ, հովիւ, ճախարակ, ճօճանակ, ճակնդեղ, մազ, ծամ, ծամող, պարանոց, պարտիզ-պան, այգեպան, աղաւնի, աղաւնեվաճառ, ծիտ, լոր, կաքաւ:

ՀՆՉԻՒՆ ԵՒ ՏԱՌ

22. Ամեն բառ՝ մի կամ մի քանի վան-կերէ շինուած է, իսկ ամեն վանկ՝ մի կամ մի քանի հաշուններէ:

23. Գրելու ժամանակ հնչիւններու տեղ առանձին նշաններ կը գործածենք որոնք դաւ կամ ուր կը կոչուին:

24. Կան տառեր, որոնք հեշտիւ կ'արտա-սանուին և միայնակ, առանց ուրիշ տա-ռերու օգնութեան, պարզ կը հնչուին. բայց կան և այնպիսի տառեր որոնք միայնակ դժուար կը հնչուին, և միայն դիւրաւ հընչը-ւող տառերու օգնութեամբ կ'արտասան-ուին:

Հեշտիւ հնչուող տառերն են՝ ա, ե, է, ի, ը, ո, օ, ու: Առքա կը կոչուին Յայնաւու տառեր:

Դժուար հնչուող տառերն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, յ, ն, շ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, ֆ: Առքա քաղաքայն կը կոչուին:

Բաղաձայն տառերը հեշտիւ հնչելու հա-մար անոնց մօտ կը դնենք և տառը՝ բը, գը ...

25. Առանց ձայնաւոր տառի վանկ չի լինիր: Բառի մէջ քանի ձայնաւոր որ լինի, այնքան ալ վանկ կ'ունենայ նա: Առանց բաղաձայն տառի վանկ չէ կարող լինել:

26. Գրելու ժամանակ՝ բառի մի մասը մէկ տողէն միւս տողը անցընելու համար, պէտք է ամբողջ վանկ կամ վանկեր անցը-նել: — Եթէ բառի մէջ մի քանի բաղաձայն տառեր միմեանց մօտ գտնուին՝ տողադար-ձի մէջ պէտք է մտցնել և տառը:

41. Հետեւեալ ոտանաւորի բառերը վանկերու բաժնած գրեցէք՝ տողադարձի կանոնին համաձայն:

Փոքրիկ մի գառնուկ ձեան նման սպիտակ, իւր մօր հետ մի օր գնաց դաշտն արածուիլ. Եւ այնտեղ սկսաւ ժայռ ու քարի տակ Անվախ համարձակ խաղալ ու վաղել: Անխոհեմ գառնուկ դար վեր, դար ու վար, ֆար, փայտ չէր նայեր, անհոգ կ'ընթանար:

Որդեա'կ իմ, հանդա'րտ, մայրը կը ձայնէր Ըզդոյշ կաց որդեա'կ, բայց նա չէր լսեր, Գառնուկն անդադար խաղալով թռչէր Դար վեր, դար ու վար միշտ կը վազվէր: Գառնուկն մօր ձայնին երբ ականջ չդրաւ, իւր յիմարութեան պատիմը գըտաւ.

Լերան գաղաթը շատ մեծ քար մի կար
Որուն տակն ու վրան գառնուկ կը խաղար,
Եւ ահա մի ոտն նորա տակ մընաց,
Ու քսան տեղէն կոտրեցաւ գընաց :

27. Հայերէն տառերը հետեւեալ կար-
դաւ կը գրուին և կը կարդացուին՝ այբ, բէն,
դիմ, դա, եչ, զա, է, ըթ, թոյ, ժէ, ինի, լիւն,
խէ, ծա, կէն, հոյ, ձա, զադ, ճէ, մէն, յի, նու,
շա, ոյ, չա, պէ, ջէ, ուա, սէ, վէվ, տիւն, րէ, ցօ,
ւիւն, փիւր, քէ, օ, ֆէ^{*}) :

28. Բոլոր տառերն ի միասին՝ կը կազ-
մեն հայերէն այսուհետեւ, իսկ վերոգրեալ կար-
դը կը կոչուի այսուհետեւ կարդ : Հայերէն այ-
րութենի տառերը 38 են : —

, ՏԱՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

29. Հայերէն այրութենի մէջ՝ տառը ե-
րեք պաշտօն կը կատարէ, առաջին՝ բաղա-
ձայն տառի պէս կը կարդացուի՝ զորօրինակ
[յարկ—հարկ] . Երկրորդ կիսաձայն և տառի

*) օ և ֆ տառերը վերջին ժամանակներն են մտած հայերէն այրութենի մէջ . օ-ի փոխանակ՝ առաջ կը գոր-
ծածուէր առ, իսկ ֆ այժմ ալ շատ քիչ զործածութիւն
ունի մեր մէջ . Փոսվ կը գրուին միմիայն օտարազգի բա-
ռերը :

պէս կը հնչուի (գ.օր. եղբայր—եղբախր) և եր-
րորդ՝ բոլորովին համր կը մնայ . (գ.օր. քահա-
նայ—քահանանա) :

30. Բառի սկիզբու տառը փափուկ էի
պէս կը կարդ ացուի . ովկ սկսուած բառերը
մեծ մասամբ առանց , տառի եւս կը պահ-
պանեն իրենց նշանակութիւնը , քիչ շատ
հասկնալի կը լինին . Զ.օր. յետոյ — ետոյ .
յառաջ—առաջ . Յիսուս—իսուս . յիսուն—
իթսուն :

42. Հետեւեալ խօսքերու մէջ գտէք յ-ով սկսուած
բառերը և տակը գիծ քաշեցէք : — Յիսուս՝ յամառ
և յանդուգն մանուկները չ'սիրեր : Յակոբ յանդի-
մանեց մի յիմար տղայ : Յուսիկ յարձակեցաւ Յով-
ոէֆի վրայ և յափշտակեց նորա ձեռքէն յասմիկը :
Յուդան սպաննեց մի յովազ : Յարէթը յամրաքայլ
գետին եղերքը կ'զբօսնէր : Կատուն աչքերը յառած
յատակին կը նայէր և կ'ուզէր նորա ներքեւ բոյն
դրած միւկը յաջողութեամբ բռնել . Յարութիւնը
յարատեւ կ'աշխատի և ամենքը կը յարդ են զինքը : Ես
տեսած եմ յակինթ և յախճապակ : Յանկարծ յար-
դի տակէն դուրս սողաց օձ մը, գիւղացին անյապաղ
սպաննեց զայն : Ուսուցիչն յայտնեց յանցաւոր
աշակերտներուն, որ ինքը յատկապէս կը նեղուի ա-
նոնցմէ, որոնք իրենց ծուլութեանը չեն յաղթեր և
յաջողութեամբ չեն պատրաստեր յաջորդ օրերուն
դասերը : Իմ գիրքս ունի յաւելուած և յառաջա-
բան : Զեր յարկի ներքեւ յարդարեցէք ձեզ համար

յարմար բնակարան։ Յաճախ Յովհաննէս չէր կարող կշտանալ իրենց պարտէզի յաւերժական գեղեցկութենէն։ Յուսիկ յանձնեց Յովհէփին և Յովակիմին իւր քրոջ յուլունքները, որոնք գեղեցիկ կերպով շարայարուած էին։ Մենք յաւիտեան չենք կարող ադատիլ մեր ծնողաց երախտագէտ լինելու պարտականութենէն։

43. յով սկսած բառերու տակը գիծ քաշեցէք։ — Ծերունին յենած իւր ցուպին՝ դէպ ի գետը կը նայէր, որոյ յստակ ջուրը յեղյեղուկ ալիքներով կը հոսէր իւր մօտէն։ ծերունին կը յիշէր իւր մանկութիւնը և կը յորդորէր իւր թոռները որ իրենց յօյար ուրիշներու վրայ չ'զնեն։ Մանուկները միշտ յօժարութեամբ ականջ կը դնէին անոր յորդորներուն և յիրաւի կը կատարէին անոր խօսքը։ Յունիս և Յուլիս ամիսներու մէջ մարդիկ տարին սաստիութենէն շուտ կը յօդնին։ Յոպոպը՝ յունապի ծառին վրայ յուշարարի պէս շարունակ կը կանչէր։ Յոյնը յղեց պողպատէ թիթեղը և յղեց իւր ընկերոջը։ Մոյլերը թէ դասէն առաջ և թէ դասէն յետոյ շարունակ կը յօրանջէին։ Հայրս շինեց մի գեղեցիկ յոպնակ—սայլակ։ Առիւծը յօշտեց մի ոչխար։ Յիշոց տալը անվայել և պախարակելի բան է։ Յոդնակի թիւ։ Յորելեան տարի։ Մտաց յեղափոխութիւն։ Զուրը յուղել։ Մտարու յօդերը համրել։ — Ոչ ոք չ'ըսեր թէ աչքիդ վրայ յօնք կայ։

Էլ չ'խօսեց Արաքսը, յորձանք տուաւ ահագին, Օղակ-օղակ օձի պէս յառաջ սողաց մոլեգին։

44. Վերոյիշեալ երկու վարժութեանց մէջ հանդիպած բոլոր յով սկսուած բառերը այբբենական

կարգով զատեցէք և ձեզ համար աղիւսակ կազմեցէք։ Աշխարհաբարի մէջ այդ բառերէ զատ յ-ով սկսուող ուրիշ բառեր հազիւ թէ կը պատահին։

31. Բառի մէջտեղերը, տառը կցուելով և „ ձայնաւուներուն՝ որպէս կիսաձայն է կը կարդացուի, և այդ ձայնաւորներուն հետ մի հնչիւն կը կաղմէ որ կը կոչ երկբարբառ։ (այ, ոյ)։

Երկբարբառը տաղադարձի ժամանակ մի տառ կը համարուի և չի բաժնուիր։

45. Հետեւեալ բառերը վանկերու բաժնեցէք և դտէք անոնց մէջ յով կազմուած երկբարբառը։ Հայր, հայրենի, այս, այսօր, այժմ, այծ, այդ, այդի, այրի, այդ, այլակերպ, բայց, գայլ, գայլայիկ, Զարմայր, զայրանալ, ժայռ, եղբայր, հայրենասէր։

Դոյութիւն, գոյական, ախոյեան, հոյակապ, նոյաշէն, շոյել։

Լոյս, յոյս, յոյն, բոյս, բոյն, կոյս, գոյն, թոյն, ոյժ, գոյժ, աշխոյժ, ժամացոյց, համբոյր, Պարոյր, հօրաքոյր, թակոյկ, մակոյկ, երեկոյթ, հացկերոյթ։

32. Բառերու վերջերը և ձայնաւորները միայնակ չեն մնար, այլ միշտ, վերջաւորութիւնը կ'առնուն։

33. Միավանկ բառերու վերջը, տառը կը կարդացուի որպէս կէս է, իսկ բաղմավանկ բառերու վերջը համր կը մնայ, — մի կարդացուիր։

46. Հետեւեալ խօսքերուն մէջէն զատեցէք , ունեցող միավանկ և բազմավանկ բառերը :
Ես տեսայ մէկ հայ . Յովհաննէսը թէյ կը խմէր .
Թէյին կ'ըսեն չայ . Նոյ ունէր երեք որդի . Ճայ թըռչունը ճահճային տեղեր կը սիրէ . Այնպէս ընենք որ
վերջէն գլխնուս վայ չ'տանք . Հայրս գնեց մի կաթ-
այ . Ես տեսայ մէկ քահանայ . Այս երեկոյ ես պիտի
երթամ եկեղեցի , յետոյ տուն կուգամ և դասերս
կը սերտեմ . Ամառուան տաք օրերուն տղայ մը նըս-
տած էր մի ծառի տակ . Ես տեսայ զնա , մօտեցայ և
քովը նստեցայ :

Այսօրուան գործդ վազուան մի ձգեր :

34. Գործողութիւն ցուցնող միավանկ
բառերու վերջը եւս , տառը համր կը մնայ :

47. Վարժապետը ուսումնարան կուգայ և մեզի
դաս կուտայ . Պայուսակիս մէջ գիրք և տետրակներ
կան . Ռուբէնը մօտս կը մնայ : Երբ երեխան լայ ,
մայրս անոր ծիծ կ'ուտայ :

35. Յատուկ անուններու վերջը , գոր-
ծողութիւնը հրամայական ձեւով գրուած
ժամանակը և ո՞ , ո՞ , ո՞ , ա՞ , ո՞ , ա՞ բառե-
րուն վերջը , տառը չի գրուիր , այլ կը վեր-
ցուի :

48. Գնա՞ և ըսէ՞ ընկերիս , որ իմ քովս գայ :
Դու կարդա՞ գասդ և նա կը լսէ . յետոյ նա կը
կարդայ և դու կը լսես . Քահանան եկեղեցւոյ մէջ կ'ը-
սէ . «Կեցո՞ , Տէր , զժողովուրդս քո և օրհնեա՞ զժա-
ռանդութիւնս քո» : — «Խոնարհեցո՞ , ապրեցո՞» :

Քու եղբօրդ անունը Եղիա է . Նորա քրոջ անունը
Աննա է . Իմ անունս Արա է . Քրոջս անունը Ովսան-
նա է . Մօրս անունը Սոնա է . Ֆրանսա , Իտալիա ,
Գերմանիա , Անգլիա և Ռուսիա՝ աշխարհներու ա-
նուններ են .

49. Գրեցէ՞ք ձեր կողմանէ , տառ ունեցող բա-
ռեր՝ ձեր սովորած կանոններու համաձայն . Ամեն մի
կանոնի վրայ հինգ բառ գրեցէք , միայն թէ այն
կարգով , ինչ կարգով որ այս տեղ դասաւորուած են
կանոնները :

Հ ե - ՏԱՐԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

36. Հայերէն այբուբենի մէջ և հնչիւնը
երկու նշանագիր ունի չե - :

ա. Բառի սկիզբը - չ'գրուիր , իսկ բառի
վերջը չ:

բ. « ձայնաւորէն առաջ և չ'գրուիր թէկ
կը լսուի . իսկ ։ Են ետքը - չ'գրուիր իւր իս-
կական հնչմամբ այլ միշտ չ:

գ. - միշտ կը գործածուի ձայնաւորէն
ետքը , իսկ և միայն ձայնաւորէն առաջ :

դ. Բարդութեանց մէջ ձայնաւորէն ետ-
քը և կարելի է դնել :

50. և հնչիւնը բառի սկիզբը և վերջը . — Վարդ ,
հաւ , վար , ցաւ , վաղ , կաւ , վեղար , վերեւ , համ-
բաւ , վարսակ , վասակ , վաղարչ , Վարդան , բարեւ ,

արեւ, անձրեւ, տերեւ, վահան, վանք, վուշ, կռիւ, անիւ, աղնիւ, թիւ, եկաւ, տեսաւ, կերաւ, տարաւ, բերաւ:

51. Հ հնչիւնը . էն առաջ և յետոյ: — Ոսկի, որդի, ոչնչ, Ոսկան, ոգի, ոլոգ, ոլոր, ոլորակ, ողբ, ողն, ողկոյզ, ողնաշար, ողորկ, ողողել, ողօրմելի, որջ, ողջունել, ոճ, ոչխար, ոսպ, ոտկի, ոսոխն, ոստ, ոստախ, ոստան, ոստոստել, ոտք, ոտանաւոր, որբանալ, որդ, որկոր, որկրամոլ, ործ, որձաքար, որմ, որոգ այթ, որոճող, որոնել, որոշել, որս:

Կով, սով, հով, ծով, բով, կորով, կորով, ժողով, խորոված, սովորել: Հայրս ձիով քաղաք զնաց և շուտով վերադարձաւ: Ծովի վրայ նաւով կ'երթան, իսկ ցամաքի վրայ, սայլով, կառքով, ձիով, էշով, ջորիով, երկաթուղիով: — Տեմնելով, ըսելով, ընելով, գնալով, գալով, տալով, մնալով:

52. Վերջին եօթը տողերու մէջ չով վերջացած բառերու Հ տառը փոխեցէք — տառի և կարդացէք:

53. — Հնչիւնը ձայնաւորէ ետքը: — Աւաղ, աւագ, աւազան, աւելի, աւետիս, աւետարան, Ոնուշաւան, բաւական, բաւարար, բեւեռ, գաւազան, գաւաթ, գաւառ, գաւանել, գաւակից, Գաւիթ, Եւա, Եւրոպա, զաւակ, թագաւոր, ժապաւէն, լաւանալ, խաւար, ծարաւիլ, ծաւալել, հաւատ, հաւան, հեւալ, հիւանդ, հեռաւոր, ծաւար, Ղեւոնդ, ծիւազ, նաւակ, Շաւարչ, սաւան, Սեւան, տաւար, տաւիդ, ցաւագար, առաւօտ, քաւող, փարաւոն:

54. Հետեւեալ բառերէն իւրաքանչիւրը երկու մասի բաժնեցէք, միայն թէ այնպէս, որ ամեն մէկ մասը առանձին նշանակութիւն ունենայ: — Նաւավար

(նաւ և վարել) զօրավար, կառավար, վարդավառ, բոցավառ, մրգավաճառ, հացավաճառ, այրիվանք, օրավար, համավաստակ, բազմավոանդ, կարմրավարդ, երկարավիզ, օթեկան, հոդեվարք:

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ . . . և Է-ԵՐԿԲԱՐԲԱՌԱՆԵՐՈՒ

37. Երբ ։ տառը . . և ։ տառերու ետեւը գրուի՝ ձայնը կը կորսուի և անոնց հետ առանձին նոր հնչիւն մը կը կազմէ, որ երկու տառէ բաղկացած ըլլալուն համար երկրաբարբառ կը կոչուի . . . և ։ Երկբարբառները տողադարձի ժամանակ անբաժան կը մնան:

38. . . Երկբարբառը պարզ հնչիւն ունի, միայն անմիջապէս ետեւէն եթէ ո և իցէ ձայնաւոր մը ունենայ՝ մեղմ չի ձայն կը հանէ. իսկ երբ երկու . . միւնոյն բառի մէջ իրարու հանդիպին՝ առաջին . . ի՝ ։ տառը՝ ներդաշնակութեան համար դուրս կը ձգուի, կամ . . ին կը փոխարինէ Հ հնչիւնը :

55. Հետեւեալ բառերուն և խօսքերուն մէջ գտեք թէ ուր տեղ . . տառը կը պահէ իւր պարզ հնչիւնը, ուր տեղ մեղմ չ կը հնչուի, և ո՞ր բառերուն մէջ կարելի է զայն կրճատել:

— Տուն, բուն, անուն, գարուն, աշուն, կանգուն, շուն, նուշ, անուշ, կատու, բու, թութակ, յու-

նապ, աղուն, ուզտ, ուս, ուրագ, ուտել, ունենալ, Ես ունիմ ուրագ. Սողունները կը սողային խոտերու մէջ. Նա իւր դասը կը կարդայ ուղեղ և անսխալ: Ռուբէնը կ'երթայ խաղալու. Ես կը պատրաստեմ դասս:

Հայրս ինձ դիրք մը նուիրեց. Վարժապետը պատւիրեց որ մեր տետրակները մաքուր պահենք. Գայլը հովուին ոչսարներէն մէկը յափշտակեց. Զմեռը՝ դեռը ծածկուած էր սառոյցով.

Կ'ըսեն որ դասը չսովորելը անպատուութիւն է. Ես աղնուութեամի կը կատարեմ իմ պարտքս. Երկու մանուկներ այսօր փողոցի մէջ կը ծեծկուէին. Թշնամիները իրարու հետ կը կուուին: Ստախօս մարդը արժանապատիւ լինելէ հեռու պէտք է համարինք: Նա կը լուացուի, կը մաքրուի, կը սանտրուի և յետոյ դէպի ուսումնարան կ'ուզեւորի:

39. Է- երկբարբառ է, երբ անմիջապէս ետեւէն իրեն կից ո և է արմատական բաղաձայն մը ունի՝ իւ-ւ, իւ-ւ, հիւ-ա:

Է- պարզ վանկ է և չէ կը կարդացուի, եթէ իրմէ ետքը արմատական բաղաձայն չ'ունի-նէ-, ան-նէ-, նէ-լ, ան-կ:

56. Հետեւեալ բառերու. և խօսքերու մէջ գտէք թէ ո'րտեղ է- երկբարբառ է և ո'րտեղ սոսկ վանկ. բոլոր օրինակները երկու կարգի բաժնեցեք:

Թիւ-թիւն, աղնիւ, աղնուութիւն, անիւ, ձիւն, կախ, նիւթ, պատիւ, իւղ, միւս, հիւանդ, հիւսն, դիւան, գիւղ, գիւտ, բիւր, հիւր, ձիւթ, հիւթ, դիւահար, ձիւաղ, իւր, կիւրակէ, կիւրեղ, հիւսիս,

սիւնակ, դիւրին: Սայլը անիւներով կը շրջի: Ազնիւները անազնիւներէն միշտ հեռու պէտք է մնան: Աղբիւրի ջուրը շատ առողջարար է. Տունը աղիւսէ կը շինեն: Մարդու արիւնը տաք է և կարմիր:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ և ՏԱՌԵՐՈՒ

40. Հայերէն լեզուի մէջ . և . տառերը շատ անգամ իրարու նման կը հնչուին, բայց տարբեր ուղղագրութիւն ունին:

ա. Բառի սկիզբները . և . կը պահեն իրենց կանոնաւոր հնչիւնը (օր, որ, ող, ողն):

բ. և բաղաձայնէ առաջ միայն՝ . իւր ձայնը կը կորսնցնէ . և . (ով) կը կարդացուի :

գ. Բառերուն վերջը . չգործածուիր այլ միշտ ոյ կամ ո (յետոյ, կեցո):

դ. Բառի մէջտեղերը . և . տառերը հաւասարապէս . կը կարդացուին (մօր, մոր, հօր, հոր):

57. Հետեւեալ բառերը երեք խումբի բաժնեցէք . և . տառերու ուղղագրութեանը նայելով. — Օր, որ, օրթի, որդի, օղ, ողն, օդ, որդ, օրթ, օրօրոց, օգնական, օժանդակել, ողբալ, որսալ, ոտոստել, օծել, օթեւանել, օձ, օշարակ, օտար, օրիորդ, ոսկի, ոսպ, օրինակ, օրէնք, օրհնութիւն, օձիք, օղի, օճառ, օշինդր:

Ով, ովկիանոս, ովասիս, ովթաննա:

Յետոյ, երեկոյ, յարգոյ, ապրեցո՛, կեցո՛, խո-
նարհեցո՛, դշխոյ, Յարոյ, Կարոյ, արտաքոյ, ներքոյ։
58. Հետեւեալ խօսքերուն մէջը ունեցող բառե-
րը զատեցէք և տակը դիմ քաշեցէք։ — Գիւղացին
արօրով կը վարէ երկիրը և խոր խոր ակօներ կը բա-
նայ։ Առաւօտը անօթի գնացի արտերը զրօնելու։
Վաշխառուն արօտէն նոր բերուած մեր կովը խեց,
մայրս աչքերէն արցունք թափելով, տանը անօթները
վաճառեց շուտով և վաշխառուին պարտքը վճարեց
և կովը ետ առաւ։ Այսօր տունը աղօթելէ յետոյ,
դացինք բացօդեայ աղատ դաշտը։ Ճամբուն վրայ ա-
րօսի ծառ մը կար, որուն վրայ արօս թռչունը բոյն
էր շնած։ Լուսնի աղօտ լոյսը երդիկէն ներս թա-
փանցեց։ Աղօրիքով մայրս աղ կաղար, երր բօթա-
բերը իւր սպաննուած որդւոյն մահուան դոյժը
բերաւ։

59. Քրիստոսի մօտ հիւանդ մը բերին, որոյ ձեռ-
քը գօսացած էր։ Մեր ուսումնարանի մէջ գիշերօ-
թիկ աշակերտներ ալ կան։ Աղասին գօտին կապեց,
թռւը կախեց, դուրս վազեց։ Ահա՛, եղբայր, քեզ
մի դրօշ, որ իմ ձեռքով գործեցի։ Եօթը զգօն ճա-
նապարհորդներ՝ թեղօշի թօնած։ տերեւներու հո-
գովանին և տօթը արհամարհելով ու իրենց յօդնա-
ծութեանը չնայելով, թօթափեցին իրենց փոշին և ի-
րենց զօրեղ ոտքերնուն ուժ տալով յառաջ գնացին։
Իմ եղբօրորդիս դարբին է։ Նա կրակի մէջ երկաթը
կը զօդէ։ Գորտի մի տեսակին դօդօշ կ'ըսեն, իսկ
մողէսի մի տեսակին քարաթոթոշ։ Քահանաները այ-
սօր թափորի ելան։ Նոքա լէգէոնի պէս արշաւեցին։
Պարտէզի պատերէն կախուած լոշտակի կակուղ ցո-
ղուններ։ Վերաբկուի մի տեսակին լոդիկ կ'ըսեն, Յի-

մար մարդուն խօսք չ'ես կարող հասկցնել։ Մանօթիս
ծնոտը վիրաւորուեր է։ Մանուկը ծօղակով թռչուն
բռնեց իւր պարտէզին մէջ։

60. Պօղոսը համառօտ նամակով մը իւր սրտի կա-
րոտը յայտնեց եղբօրը։ Աղքատը ոտները կօշիկ չ'ու-
նէր։ Կրօնի ուսուցիչը հօրաքրոջն կարճառօտ պատ-
մեց դասի բովանդակութիւնը։ Առիւծը որջին մէջ
պահուըտած էր երբ իւր հզօր ձայնով մռնչեց և հօտն
ու հօրան, եզն ու հօտաղ սարսափի մէջ ինկան։ Զան-
գակը կը զօղանջէր, սուրը կը ճօճէր և ժամացոյցի
ճօճանակը կը շարժէր։ Մրայօն աղջիկ մը իւր առա-
ջին ձեռագործը մօրաքրոջը ձօնեց։ Գայլը յօշոտեց
մի դառն։ Պօղոս յօժարութեամբ մի յօդուած գրեց։
Կապկի մատներու յօդերը երկար են։ Երկայնամօ-
րուս այծը սիդաճեմ կը պտըտէր։ Այգեպանը յօնքը
ժողված կը յօտէր որթոյ փափուկ ոստերը։ Մի
բան յօրինած ժամանակդ արթուն եղի՛ր, մի՛ յօ-
րանջեր։ Նախատօնակէն յետոյ երեխան մկրտեցին,
քահանան նարօտը կապեց, անունը նօտը տառերով
դրեց տօմարի մէջ և իւր պաշտօնը վերջացուց։ Եկե-
ղեցւոյ մէջ կան ոսկեզօծ պատկերներ ոքոց վրայ սրփ-
ուած են ոսկեզօծ ծածկոցներ։

61. Պօղոս պարեկօտը հադաւ և Սօսի հետ լեռ-
ները գնաց քօշ որսալու։ Սօսի ծառի սօսափիւնը
շատ ախորժելի է ինձ։ Տօսախի (շիմշիր) փայտէ՝ ա-
մաններ կը շննեն։ Գիւղացի հարար՝ քօղն երեսին, ոտ-
քը սօլեր՝ ցողաթաթախ մարգերէն կանաչեղչն կը
քաղէր։ Նօտարները տօնի օրերը իրենց գրասենեակ-
ները չ'են բանար։ Եօշտիկով կարելի է զանազանել
առարկայի նօսին ու թանձըր։ Միոիթար Պօշը զուար-
ճալի առակներ գրած է։ Նաւթին՝ նօթ ալ կ'ըսեն։

62. Արդեօք ուսումնարանէն կուգաք. Մարդկո-
րէն գործած սխալներուդ Աստուած կը ներէ. —
Կարդալ — կարդացող : Ծնել — ծնող — ծնող. Գրել —
գրող — գրող : Գործել — գործօն . Կտրել — կտրօն :

63. Վերոյիշեալ հինգ վարժութեանց (58.59.60.
61.62) մէջէն այբուբենի կարգով զատեցէք բոլոր
ունեցող բառերը և ձեզ համար մի ցանկ կազմեցէք :
Աշխարհաբարի մէջ այդ բառերէն զատ՝ ովկրուող
բառեր հազիւթէ կը պատահին . Մնացած բոլոր բա-
ռերը ոով կը գրուին :

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ և ԵՒ և ՏԱՌԵԲՈՒ

41. Հայերէն այբուբենի մէջ կան ուրիշ
երկու տառեր որոնք բառերու մէջ հա-
մարեա թէ համանման հնչիւն ունին, թէև
դոցա ուղղագրութիւնը տարբեր է իրարմէ :
Դոքա են և և :

ա. Բառի սկիզբը և և և տառերը կը
պահեն իրենց յատուկ հնչիւնը :

բ. Բառերու վերջը և տառը երբէք չ'
գործածուիր :

գ. Բառերու մէջտեղը և և և միատեսակ
կը հնչուին :

64. Ա. Բ. Հետեւեալ բառերը երկու խումբի բաժ-
նեցէք՝ սկիզբը և ունեցողները և սկիզբը կամ վերջը
և ունեցողները .

Ես, եղն, եղեւնի, էգ, էակ, երգ, եղեմ, եղ,
էշ, էրէ, էութիւն, եզր, ենել, եկաւ, եղաւ, եկե-
ղեցի, էջ, էր, էհ, եղբայր, եղեամ, եղեղն : Հայրս
եղեւնի կը կտրէ : Քոյրդ եղինջ կը քաղէ, եղջերուն
խոտ կ'ուտէ, Գայիանէն վերցուց մի եռոտանի :
Վարդառէն եպիսկոպոսին ձեռքը համբուրեց : Հովի-
սիմէն եռանդուն աղջիկ է : Մամբէն երեք երդ
երգեց : Մարդարէին հրամանով երկրի երեսը մանա-
նայով ծածկուեցաւ . Եօթը հոգի կերան մեր եփած
կերակրէն : Երկինքը ամպերով ծածկուեր է :

42. Բառի մէջ և կը գործածուի .

ա. Մի քանի որոշ վերջաւորութիւն ու-
նեցաղ բառերու մէջ :

բ. Այն բառերու մէջ՝ որոնց փոխուած
միջոցին՝ և հնչիւնը կամ կը փոխուի կամ կը
կորսուի : —Պարտէզ, պարտիզի. գէզ, գզել :

գ. Այն մի քանի բառերու մէջ, ուր և
հնչման փոփոխութիւնը համարեա՝ թէ գոր-
ծածութենէ ինկեր է նոր լեզուի մէջ :

65. Հետեւեալ բառերու մէջ վերջաւորութեանց
տակ գիծ քաշեցէք և այդպիսի վերջաւորութիւն ու-
նեցող բառերու մէջ միշտ և տառը գործածեցէք :

ա. Գինեւէտ, հոտաւէտ, ծաղկաւէտ, մրգաւէտ :

բ. Քաջապէս, արիապէս, մեծապէս, գրակա-
նապէս, ինձ պէս, քեզ պէս . . .

գ. Հացեղէն, քարեղէն, հողեղէն, մսեղէն, կա-
նաշեղէն . . .

դ. Մարդկօրէն, ինքնօրէն, անօրէն . . .

Ե. Հայերէն, ֆրանսերէն, տաճկերէն, պարակերէն, ռուսերէն . . .

Զ. Թագլնկէց, դահընկէց, շանթընկէց . . .

Է. Ջրօրհնէք, եկէք, գնացէք, տարէք, կը տեսնէք . . .

Ը. Կը գրէր, կը բերէր, կը տանէր, կ'ուտէր, կը խմէր, կը հագնէր . . .

Թ. Թովհաննէս, Վրժանէս, Արիստակէս . . .

Ժ. Էմմանուէլ, Խորաչէլ, Արէլ, Նաժաննայէլ . . .

ԺԱ. Կայէն, Ռուրէն, Բարէէն, Սուրէն . . .

66. Վերոյիշեալ տասնումէկ վերջաւորութեանց վրայ օրինակներ գրեցէք ձեր կողմանէ՝ իւրաքանչիւր վերջաւորութեան վրայ երկու կամ երեք օրինակ: — Գողթան գաւառը գինեւէտ երկիր է: — Դաշտին մէջ հոտաւէտ ծաղիկներ շատ կան, ևայլ:

67. Հետեւեալ բառերը այնպէս մը փոփոխեցէք որ է հնչման տեղ է գրուի:

Ապաւէն—ապաւիննել: Անէծք—անիծնել, Վրէպ—վրիպակ: Գէջ—գիջանալ, Լէզ—լիզել, Գէշ, գէս, գէտ, գէր, գէզ, գէպ, գէտ, գէմք, գէնք, ընդդէմ, ծէս, կէս, հանդէպ, հանդէս, հրկէզ, ձէթ—ձիթենի, մէգ, մէջ, յառաջադէմ, շէկ, շէն, շէջ, պատուէր, նուէր, հրաւէր, պարտէզ, ջրվէժ, սէդ, սէզ, սէր, ստէպ, վէճ, վէմ, վէրք, վէպ, տդէտ, տէգ, տէր, տնօրէն, փոխարէն, քէն:

68. Հետեւեալ խօսքերու մէջ գտէք և ունեցող բառերը և անոնց տակը գիծ քաշեցէք: — Պատէն կախուած է մի քարտէզ, Ախտաժէտ և ազէտալից մարդիկ եկեղեցին կ'աղօթէին և մեղայ կը գոչէին: Մաղիկներու առէշըները բացուեցան: Աղուէսը իւր որջը մտաւ: Գէթ ամեն մարդ պարտաճանաչ լինէր: Մա-

ռի տերեւները ծածկուեցան գաղպէնով: Եկեղեցւոյ գմբէթին վրայ նատած էր բուէճը: Գոմէշը ուժեղ է: Երէկ մեր տան երէցը մեզ այցելեց: Թէպէտ թատրոն չեմ երթար բայց այնտեղ ներկայացուածները լսելու հակամէտ եմ: Ծոյլ տղան իմ աշքիս ստակի մը արժէք չ'ունի: Զուլհակի սանտրի բռնելիքը բէջ կը կոչուի: Նազարէթը ժապաւէն գնեց: Եղեւնի ծառէն խէժ կը ծորէ: Դեղձի ծառն ալ կռէզ ունի: Առաւոտը կանուխ՝ գիւղացին անտառէն խէչակ կը կտրէր: Կայէն՝ Արէլի գէմ խէթ ունէր: Ուղտին մէջքի ուռեցքը՝ կուտկէն կը կոչուի:

69. Կոճղէզաւոր բոյսերը մեծ մասամբ կծու համունին: Դարբինը կը ծեծէ հրաշէկ երկաթը: Մի հէգ աղջիկ աղքատութեամբ կ'ապրէր: Հրէան պարէն կը վաճառէր: Հայրս տանը գիմաց պատնէշ քաշեց: Ես նարգէս ցանեցի: Կօշկակարը շրէշ կը գործածէր: Շահէնը գիշատող թռչուն է: Զէզոք մարդիկ գլխացաւ չ'են քաշեր: Ամենքը պէտք է սակաւապէտ լինին: Ռուրէնը վէգ կը խաղայ: Ալիքները վէտ վէտ կը ծփալին: Սա՝ վէս-պնդագլուխ մարդ է: Քրիստոնէական օրէնքը բրէական յանցաւորին պատիժ կը սահմանէ:

70. Վերոյիշեալ երեք վարժութեանց մէջէն՝ է-ով գրուող բառերը զատեցէք և այբրենական կարգով ձեզ համար ցուցակ մը կազմեցէք: Բացի այդ բառերէն՝ աշխարհաբար լեզուի մէջ ուրիշ է-ով գրուող բառեր հազիւ թէ կը պատահին:

71. Հետեւեալ խօսքերու մէջէն գտէք առարկայն, որպիսութիւնը և գործողութիւնը: Տեսէք թէ

իւրաքանչիւր բառ քանի՞ վանկ ունի և իւրաքանչիւր վանկի մէջ որո՞նք են ձայնաւոր և որո՞նք՝ բաղաձայն տառելոր :

Փոքրիկ Հայկանուշը տեսաւ հայրը : Հայրը բռնով մանը ու փայլուն սերմեր կը ցանէր : Անուշ լեզուն տուն կը շինէ : Կծու լեզուն տուն կը քանդէ : Բարկ քացախը ամանը կը ճամեցնէ . Կարմիր հաւկիթը Զատկին կը վայլէ : Աշխատասէր մարդու դրան՝ անօթութիւնը չ'մօտենար : Մլաւող կատուն՝ մուկ չի բռներ :

<p>Փոքրիկ</p> <p>Հայկանուշը</p> <p>տեսաւ</p> <p>հայրը</p>	<p>Փոքրիկ Հայկանուշի որպիսութիւնը կը ցուցնէ . — ի՞նչպիսի՞ Հայկանուշ : Երկավանկ բառ է . ունի երկու ձայնաւոր — , է , և երեք բաղաձայն — ի , ո , է :</p> <p>Հայկանուշ՝ չնչաւոր առարկայի անուն է : Գործ կատարողն է . — ո՞վ տեսաւ : Բաղմափանկ բառ է . ունի երկու ձայնաւոր — , ո , և , երկու երկրարբառ — ա , ա և չորս բաղաձայն — ի , ո , է , շ :</p> <p>Տեսաւ՝ Հայկանուշի գործողութիւնն է . — ի՞նչ բրաւ Հայկանուշը : Երկավանկ բառ է . ունի երկու ձայնաւոր — ե , ա և եղեք բաղաձայն — ա , ա , է :</p> <p>Հայր՝ չնչաւոր առարկայի անուն է . Գործ կատարողը չ'է : Զո՞վ տեսաւ : Երկավանկ բառ է . ունի երկու ձայնաւոր — , ո , մէկ երկրարբառ — ա , և երկու բաղաձայն — ի , ո :</p>
---	---

72 · Միւս խօսքերն ալ այս ձեւով լուծեցէք ձեր տետրակին մէջ , իսկ դասագրքէն բերանացի շատ վարժութիւններ :

Ո՞նց է կը կազմուի խօսքը . Բառերը ի՞նչ կը ցուցնեն : Ի՞նչ է վանկը : Բառերը վանկերուն նայելով , քանի՞ կարդի կը բաժնուին : Վանկերը ի՞նչ բաներէ կը կազմուին : Տառերը քանի՞ կարդի կը բաժնուին : Որո՞նք են ձայնաւոր կոչուող ները : Ինչո՞ւ ձայնաւոր կը կոչուին : Որո՞նք բաղաձայն տառերը : Որո՞նք երկրարբառ կը կոչուին : Քանի՞ հատ են և ի՞նչ տառերէ կը կազմուին : Վանկ կազմելու համար ի՞նչ հնչին անպատճառ պէտք է : Ո՞ր հնչիւնները կարող են լինել կամ չ'լինել : Դրելու ժամանակ հնչիւնները ինչո՞վ կը նշանակուին : Որո՞նք են աւելի բազմաթիւ , հնչիւններն թէ տառերն . Ի՞նչ հնչիւններ գիտէք որոց համար երկու տառ կը գործածուի : Տողագարձի ժամանակ ի՞նչ ընդհանուր կանոն պիտի պահպանուի : Քանի՞ զիսաւոր գործածութիւն ունի , տառը : Ե՞րբ է որ նա իբր բաղաձայն կը կարդացուի , Ե՞րբ կիսաձայն և Ե՞րբ անձայն կը մնայ : Հ հնչման համար բանի՞ տառ ունինք : Ի՞նչ գործածութիւն ունին չ և տառերը : Ռ հնչիւնը ի՞նչ տառերէ կը կազմուի և ի՞նչ գործածութիւն ունի : Է հնչիւնը ի՞նչ տառերէ կը կազմուի և ի՞նչ գործածութիւն ունի : Բառին սկիզբը և վերջը ի՞նչ գործածութիւն ունին ։ և օ տառերը . իսկ բառին մէջտեղը , օ ունեցող բառերը բաղմաթիւն թէ սակաւաթիւ : Ե և է տառերը բառի սկիզբը , բառի վերջը և բառի մէջտեղերը ի՞նչպէս կը հնչուին : Բառի մէջտեղ և տառը քանի՞ կանոններու կ'ենթարկի : Ե-ով գորուող բառերու աղիւսակը : Թուեցէք բոլոր տառերը այբուբենական կարդով :

ԲԱՌԵՐՈՒԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ե Ն Թ Ա Կ Ա Յ

73. Համբաւեցաւ : — Այս խօսքին մէջ մենք հաւել վրայ կը խօսինք : Օրը ձաւեցաւ : — Այս տեղ խօսքը օրուան վրայ է :

Հետեւեալ օրինակներու մէջ գծով նշանակեցեք թէ որոյ կամ ի՞նչ բանի վրայ կը խօսուի : — Խոռը կը կանաչնայ : Արեւը կը փայլի : Ծիծառը գարնան հետ դէպի մեղ կը թռչի : Ահա՝ ծագեցաւ արեգակը : Ահա՝ ծաղկեցաւ մանուշակը : Մեղուն թողուց իւր փեթակը : Արշալոյսը շուտ բացուեցաւ : Քրիստոս յարեաւ : Առուները խոխոջացին : Ծառերը բողոջցին : Դաշտը սիրուն զարդարուեցաւ : Գեղեցիկ դաշտունը եկաւ : Սաւդաղուն իւր առատ ձեռքը բացաւ և արտերը ու անտառները հարստացուց : Դաշտի ծաղիկները ցօղով ծածկուեցան : Տաւար ու ոչխար արօտը ելան : Թանձր մէգերը երկրէս հեռացան : Ամեն կենդանիներ դաշտը լիցուեցան :

Չուկը կը լողայ : Թռչունը կը թռչի : Ծառերը կը ծաղկին : Դարունը կ'սկսի : Զիւները կը հալին : Ամառը կը համնի : Արտերը կը հասուննան : Աշունը կը մօտենայ : Ծառերը լաւ պտուղ կուտան :

74. Երեսունը Հարեց հողը : — Այստեղ երկրագործի մասին կը խօսուի : Կ'ըսենք թէ ՞լ վարեց հողը : Զիւրուը հողը յէւց մէծ սուհան : Այստեղ խօսքը ձկնորսի վրայ է , ըսել կ'ուղենք թէ ՞լ է ձգողը :

Զուրը կը հոսի : — Այստեղ խօսքերնիս ջրին վրայ է . ըսել կ'ուղենք թէ ՞նշան որ կը հոսի : Դեռը կը սաւ :

Այստեղ խօսքերնիս գետի վրայ է , ըսել կ'ուղենք թէ ՞նշան որ կը սաւի :

Վերոյիշեալ (73 թիւ) օրինակներու մէջ գտէք այն առարկայները որոց վրայ է խօսքերնիս և իւրաքանչիւրին համապատասխանող հարցումներ դրէք :

43. Այն առարկայն որուն վրայ կը խօսինք բարկարագ, կը կոչուի :

ա. Ենթակայն գլխաւոր առարկայն է , որուն վրայ կը խօսինք :

բ. Ենթակայն գործ կատարող առարկայն է , որուն վրայ կը խօսինք :

գ. Ենթակայն կ'որոշուի ՞լ և ՞նշան հարցումներով :

դ. Ո՞չ հարցականը շնչաւոր առարկայներուն յատուկ է :

ե. Ի՞նչ հարցականը անշունչ առարկայներուն յատուկ է :

75. Հետեւեալ օրինակներու մէջ գտէք ենթակայն և անոր համապատասխանող հարցումը : — Սպիտակ ձիւնը ծածկեց երկիրը : Ծառը մերկացաւ : Առուն սառեցաւ : Ալեւոր ձմեռը բարկացաւ : Թռչունները հեռացան դէպի տաք երկիրներ : Ճնճղուկն իւր գործը սկսաւ : Կարմիր արեւը երկինք բարձրացաւ : Եղբայրն ուսումնարանէն տուն եկաւ : Փաքիկ քյորը հարցումները ըրաւ : Եղբայրը պատմեց բոլըրը : Ուսուցիչը կը նստի ամոռուի վրայ : Դասատան մէջ գրատախտակ կայ : Աշակերտներու առջեւ դրուած են քարեւտախտակներ : Ուսուցիչը կ'ուսուցանէ : Աշակերտները կ'ուսանին : Կանոնը կատրեցաւ : Պատը քանդեցաւ : Տունը շինուած է :

Ս Տ Ո Ր Ո Գ Ր Ե Ա Լ

76. Աշակերտը կը էրեւ : — Այս խօսքին մէջ ենթակայն աշակերտն է : Ենթակայի մասին կ'ըսուի թէ նա չ'ու կ'ընէր — կը էրեւ : Կը էրեւ բառը աշակերտին ըստն կը ցուցնէ :

Մանուկները կը իւղային : — Այս խօսքին մէջ ենթակայն մանուկներն են : Մանուկներու համար կ'ըսուի թէ՝ չ'ու կ'ընէն — կը խաղային . Կը իւղային բառը կը ցուցնէ ենթակային ըստն և էրդառն :

77. Հետեւեալ օրինակներու մէջ գտէք ենթակայն և այն բառը որ կը ցուցնէ անոր ըստն կամ քործանն : Գործողութիւն ցուցնող բառին տակը գիծքաշեցէք :

Սոխակը կ'երդէ : Ծիծեռնակը կը ճռուողէ : Գորտը կը կրկռայ : Ամառը մանուկները դաշտ դաշին մորի քաղելու : Երկրադորձը երկերը վարեց : Խոտը հաւաքեցին հնձողները : Մշակը բանելու կ'երթայ : Գիւղացին հալը կը կասէ : Զաղացպանը կ'աղայ աղունը : Հացթուխը կը թխէ հացը : Կոշկակարը կօշիկներ կը կարէ : Աշակերտները առաւօտուն ուսումնարան դաշին : Մանուկները կը սովորին իրենց դասերը :

78. Մառը հրիացաւ : — Այս խօսքին մէջ ծառը ենթակայ է : Ծառին համար չ'ըսուիր թէ նա ի'նչ ըրաւ , ի'նչ գործեց : այլ թէ անոր չ'ու եւսաւ , չ'ու պահեցաւ — մերկացաւ :

Փայտը կ'սրբեցաւ : — Այս խօսքին մէջ ենթակայն փայտն է : Փայտին համար ըսուած է թէ անոր ի'նչ պատահեցաւ , ուրիշները ի'նչ ըրին անոր : Կոտրուեցաւ բառը կը ցուցնէ թէ՝ փայտին չ'ու եւսաւ , չ'ու պահեցաւ :

79. Հետեւեալ օրինակներու մէջ գտէք ենթակայն և ինչ որ ենթակայի մասին ըսուած է , այն բառը որ կը ցուցնէ թէ ենթակային ի'նչ է պատահեր , ի'նչ է հանդիպեր : — Գետերը կը սառին : Դաշտերը ծաղիկներով կը լեցուին : Ծովը քամիէն ալեկոծուեցաւ : Երկերը ձիւնով ծածկուեցաւ : Ործիճը կը ակի մէջ հալեցաւ : Օրը տաքցաւ : Հունձքը վերջացաւ : Թելը կը կտրուի : Խոտը կը հնձուի : Զուրը կը խմուի : Հացը կ'ուտուի : Զգեստները կը մաշին : Տները կը շինուին :

Թուչունը իրեն համար բոյն կը շինէ : Բոյնը կը շինուի թուչունէն : Ծիծեռնակը կտուցով խոտ բերաւ : Ցինը յափշտակեց հաւի ձաղը : Վառեակը յափշտակուեցաւ ցինէն : Մայրս շոդիացուց չուրը : Զուրը շոգիացաւ ջերմութենէն :

80. Մերը +ալզր է : — Այս խօսքին մէջ ենթակայն մեղըն է : Ենթակայի համար չ'ըսեր թէ ի'նչ ըրաւ կամ թէ ի'նչ պատահեցաւ անոր , այլ կ'ըսէ թէ քաղցր է : Քաղցր է բառը կը ցուցնէ թէ մեղըն ինչէն է :

Աղակին նահանջէն է : — Այս խօսքին մէջ ենթակայն ապակին է . ապակիի մասին կ'ըսուի թէ նա թափանցիկ է : Թափանցիկ է՝ կը ցուցնէ թէ ապակին ինչէն է :

81. Հետեւեալ օրինակներու մէջ գտէք ենթակայն և այն բառը որ ենթակայի համար ըսուած է , և թէ ի'նչ կը նշանակէ :

Քացախը թթու է : Լեզին դառն է : Աշխատանքը ծանը է : Բարձը փափուկ է : Ծովը խոր է : Ծառը բարձը է : Զմեռը՝ գիշերները երկար են : Ամառուան գիշերները կարճ են : Աշակերտը ծոյլ է : Աշակերտը ծուլացաւ : Աշակերտը աշխայժ է : Աշակերտը պատրաստեց իւր դասերը : Մայրս պառաւ է : Մալրս կը պառաւնայ : Մայրս գնաց եկեղեցի : Լուսինը պայ-

ծառ է . Առւսինը կ'աղօտանայ : Առւսինը լուսաւորեց
երկիրը . Ամպերը թանձը են : Ամպերը թանձրացան :
Ամպերը անձրեւեցին . Մեղուն աշխատասէր է : Մե-
ղուն թուլացաւ տաք գոլորշին : Մեղուն արթնցաւ
ու թռաւ-գնաց դաշտը :

82 . Խայութ պարունակութ է : — Այս խօսքին մէջ խնձորը
ենթակայ է : Ենթակայի համար կ'ըսուի որ նա պտուղ
է . պտուղ բառը չ'ցուցնէր թէ՝ ենթակայն ի՞նչ կ'ընէ ,
չ'ցուցնէր թէ ենթակային ի՞նչ կը պատահի կամ նա
ինչպէս է , այլ կը ցուցնէ թէ խնձորը ի՞նչ , ի՞նչ
բան է :

Գիրքը դասատան վերաբերեալ առարկայ է : —
Այս խօսքի մէջ գիրքը ենթակայ է : Գրքին համար
ըսուած է թէ՝ նա առարկայ է : Առարկայ բառը կը
ցուցնէ թէ գիրքը ի՞նչ է , ի՞նչ բան է :

83 . Հետեւեալ օրինակներու մէջ գտէք ենթա-
կայն , և բացատրեցէք թէ ենթակային համար ի՞նչ է
ըսուած , և այդ ըսուածը ի՞նչ կը նշանակէ : — Կովը
ըստանի կենդանի է : Գայլը դադան է : Ծիծեռնակը
թռչուն է : Գեղարքունին տեսակ մը ձուկ է : Մա-
նուշակը ծաղիկ է : Անանուխը խոտ է : Խոտը բոյս է :
Երկաթը հանք է : Զուրը ըմպելիք է : Հացն ուտելիք
է : Ցորենը հացի բոյսի պտուղն է : Ցորենը օգտակար
է : Ցորենը կը չորնայ : Ցորենը կը բումնի : Աշակերտը
մարդ է : Աշակերտը փոքր է : Աշակերտը հիւանդա-
ցաւ : Աշակերտը գրեց դասը : Զին անսասուն է : Զին
ուժեղ է : Զին բեռ կը կրէ : Զին սատակեցաւ : Հայրս
մարդ է : Հայրս բարի է : Հայրս ինձ նեղացաւ :
Հայրս ինձ ներեց : Մառը բոյս է : Մառը պտուղ է
տուեր : Մառը կը կտրեն :

44 . Այն բառը՝ որ կը ցուցնէ առաջին՝
թէ ենթակայն կամ առարկայն ի՞նչ կ'ընէ ,
երկրորդ՝ թէ իրեն ի՞նչ կը պատահի , եր-
րորդ՝ թէ նա ի՞նչպէս է և չորրորդ՝ թէ նա
ի՞նչ է , կը կոչուի սորոշեալ :

Ուրեմն ստորոգելիները չորս տեսակ կը
ինին :

ա . Ենթակայի ըրածը կամ գործածը
ցուցնող :

բ . Ենթակայի պատահածը , հանդիպածը
ցուցնող :

գ . Ենթակայի ինչպէս լինելը ցուցնող :

դ . Ենթակայի ինչ լինելը ցուցնող :

կարճ ըսելով՝ ներկայէ բառին պարհաւածը և հուշե-
սորոշեալ :

Ենթակայն գտնելու համար պէտք է ստո-
րոգելեալին հարցնել իսկ ստորոգելեալը գլո-
նելու համար՝ ենթակային :

84 . Հետեւեալ օրինակներու մէջ գտէք ենթա-
կան և ստորոգելեալը , և տեսէք թէ ի՞նչ հարցմանց
կը պատասխանեն : — Թռչունը նստած էր վանդակի
մէջ : Մարդ մը վանդակին արձակեց թռչունը : Թռ-
չունը ուրախ երգ երգեց : Թռչունը գեղեցիկ էր :
Թռչունը արտուտիկ էր : Գարունը սկսաւ : Գարունը
մեղմ է : Գարունը տարւոյն գեղեցիկ եղանակն է :
Տաք ամառն եկաւ : Մարդկանց գործերը բազմացան :

Աշունը անձրեւային էր։ Աշնան թռչունները հեռու
երկերներ կ'երթան։

Մենք արժանացանք ուրախ մայխան։
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին։
Կապոյտ երկընքիդ փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ առաջ վազեցին։

45. Ենթակայն և ստորոգրեալը ամբողջ
իմաստ մը կը յայտնին։ Իմաստին ամբողջու-
թեանը կ'ըսուի նախադասուննեան։

Ենթակայն և ստորոգրեալը՝ նախադա-
սութեան անդամներն են^{*})։

Իւրաքանչիւր նախադասութենէ յետոյ
կը դրուի ստորակէտ կամ վերջակէտ։

Ստորակէտը կը դրուի երբ մի նախադա-
սութիւն՝ յետագայ նախադասութեան մաս
կը կազմէ։

Վերջակէտ կը դրուի երբ նախադասու-
թիւնը կապ չ'ունի մերձակայ նախադասու-
թեան հետ և անոր մասը չ'կազմեր։

*) Կրնայ պատահիլ այնպիսի նախադասութիւն մը, ո-
րուն մէջ թէս. ենթակայն դրուած չ'է, բայց հարցումով
կամ առանց հարցման նոյն իսկ որոշ կը հասկցուի թէ
ո՞րն է ենթակայն. (Կ'երթամ. Հնձեց. երգեցիր)։

Բայց երբեմն ալ կը պատահի և այնպիսի նախադա-
սութիւն մը, որուն մէջ ենթակայն չ'կայ, և հարցումով
ալ որոշ չ'իմացուիր թէ ո՞րն է ենթակայն. (Ցուրտ է)։

Նախադասութիւնը միշտ գլխագիրով
պէտք է սկսիլ։ Վերջակէտէն ետքն ալ նոր
նախադասութիւնը գլխագիրով կ'սկսուի։

85. Գտէք ենթակայն և ստորոգրեալը. — Մարդը
կը պտղոտի. Զուկը վրայ. Մարդն ալ կը լողայ. Թըռ-
չունները կը թռչին. Գորտերը կը ցատկեն. Օձերը կը
սողան. Արեւը լցո կուտայ. Աքաղաղը կը կանչէ.
Ճրագը կը վառի. Աչքը մարմնոյ ճրագն է. Գեղեց-
կապէս կը փայլին աստղերը. Ուրախ կը թռչտի թըռչ-
նիկը. Առաւօտը օրուան մասն է. Առաւօտը մարդիկ
կը լուացուին։

86. Հետեւեալ զոյդ բառերէն նախադասութիւն-
ներ կազմեցէ՛ք. — Ժամկոշ—զանգահարել. Երդող-
ներ—երգել. հաւատացեալներ—աղօթել. դերձակ—
ձեւել. լուացարար—լուալ. խոհարար—եփել. ա-
ռեւտրական—վաճառել. երկրագործ—վարել. զին-
ւոր—պատերազմիլ. քամին—փշել. կայծակ—փայլա-
տակել. տերեւներ—թափիլ. գետեր—սառիլ. ամպ—
որոտալ. թռչուններ—թռչիլ. հայր—հոգալ. մայր—
խնամել. քոյր—սիրել. աշակերտ—կարդալ.

87. Հետեւեալ նախադասութիւնները բաժնեցէք
իրարմէ վերջակէտով և գլխագիրեր դրէք. — Արե-
գակը կը տաքցնէ անձրեւ կուգայ ձիւնը կը հալի
սառոյցն ալ կը հալի գետերը կը մեծնան ջրերը կը
յորդանան ծառերը կը կանաչին թռչունները կը վե-
րագառնան ամպը կ'որոտայ խնձորենին կը ծաղկի
տաքերը կ'սկսին օրերը կ'երկարին արտերը կը հա-
սուննան խոտերը կը հնձուին։

88. Հետեւեալ նախադասութիւնները բաժնեցէք
իրարմէ ստորակէտներով և վերջակէտներով. Գլխա-

գիրները դրէք : — Աշակերտը ուսումնարան գնաց որպէսզի դասերը սովորի նա տուն կ'երթայ իսկ ես տունէն կուգամ գիւղացին վերադարձաւ հանդէն որ եղները տանի դու տեսա՞ր այն թռչունը որ գեղեցիկներգէր տեսայ մարդ մը որոյ ճակտէն քրտինքը կաթիլ կաթիլ կը թափէր ուղտը կ'ուտէ ինչ որ կը ճանկէ ով որ իւր հայրը ու մայրը կը պատուէ Ս.ստուած ալ անոր գործերուն յաջողութիւն կ'ուտայ ինչ որ վարժապետը դաս տուեր էր բոլորը սովորեցայ ուր որ ջուր չկայ այնտեղ չ'կրնար խոտ բուսնիլ երբ կը լուսնայ աշխատասէր մարդիկ գործի կ'երթան հաղիւ թէ կը մթնայ հաւերը կը թառին ինչ որ կըսես ա՛յն կը լսես ինչ որ կ'աշխատիս ա՛յն կ'ուտես հացի կտրածը թուրը չէ կարող կտրել թրի կտրածը կ'ողջննայ լեզուի կծածը չ'ողջննար :

89. Կաղմեցէք նախադասութիւններ , որոց ստորոգրեալ ցուցնէ թէ առարկայն ինչ կ'ընէ , իսկ ենթակայ լինին հետեւեալ անունները : — Դարբինը , ատազագործը , ուսուցիչը , աշակերտը , սոխակը , հաւը , աքաղաղը , լուսինը , անձրեւը , արեւը , մոմը , ձկնորսը , որսորդը , ձուկը , շունը , քամին , ծաղիկը , կայծակը , գետը , հովիւր , սայլորդը , քահանան , ձին , կովը , հայրը , մայրը , խոհարարը , վարժապետը :

90. Նախադասութիւններ կաղմեցէք , որոց մէջ հետեւեալ բառերը ստորոգրեալ լինին : — Կը բղջայ , կը տղպայ , կը կրկուայ , կը կարկաչէ , կը մայէ , կը բառաչէ , կը խանչէ , կը խրինչէ , կը մրմռայ , կը կաղկանձէ , կը հաջէ , կ'ոռնայ , կը մռնչէ , կը միաւէ , կը ճռուողէ , կ'որոտայ , կը փայլատակէ , կը ճայթէ , կը ճարճատէ , կը քանդէ , կը լուսաւորէ , կը ջերմացնէ , կ'այրէ , կ'այրի , կը վասէ , կը վառի , կուլայ , կ'եր-

գէ , կը կարդայ , կ'ուսանի , կ'ուսուցանէ , կը կարէ , կը մաշէ , կը մաշի :

91. Կաղմեցէք նախադասութիւններ , որոց ստորոգրեալ ցոյց տայ թէ առարկայն լ'նալունէ , իսկ ենթակայ լինին հետեւեալ բառերը : — Վարդ , միս , արիւն , բամբակ , ձիւն , ապակի , քար , քացախ , շաքար , խաղող , ջուր , խղ , ածեղի , կացին , թել , թուղթ , պողպատ , ոսկի , արծաթ , մանուկ , հաց , փայտ , օձ , գետ , մանգաղ , գարուն , ամառ , աշուն , ձմեռ :

92. Կաղմեցէք նախադասութիւններ , որոնց մէջ հետեւեալ բառերը ստորոգրեալ լինին . — Կանաչ է , կարմիր է , ուրախ է , տիսուր է , մանր է , խոչոր է , վնասակար է , օգտակար է , պիտանի է , անպիտան է , աշխատասէր է , ծոյլ է , գիւտար է , գիւրին է , փայլուն է , տժգոյն է , պինդ է , փափուկ է , կարծը է , գիւրաբեկ է , հեղուկ է , թանձր է , թափանցիկ է , անթափանց է , բարակ է , հաստ է , կարճ է , երկար է , նեղ է , լայն է , բարձր է , ցած է , ծուռ է , ուղիղ է :

93. Կաղմեցէք նախադասութիւններ , որոց ստորոգրեալ ցոյց տայ թէ առարկայն լ'նալունէ , իսկ հետեւեալ բառերը ենթակայ լինին : — Ուռենին , տանձենին , յունվարը , մայիսը , գարունը , գետը , նադաստակը , գորտը , կաղինը , բադը , շունը , արջը , ձեռքերը , ոտքերը , գաստակը , մատները , գլուխը , դէմքը , մեղուն , թիթեռը , բրինձը , գնդակը , գրիշը , գիրքը , սեղանը , արօրը , աթոռը , հացը , ջուրը , հինգշաբթին :

94. Հետեւեալ նախադասութիւնները լուծեցէք , ենթակային և ստորոգրեալին հարցմունքները ընելով . —

Մաղիկները թառամեցան (ի՞նչ բաները թառամեցան—ծաղիկները՝ ծաղիկները ենթակայ)։ Մաղիկները ի՞նչ եղան—թառամեցան՝ թառամեցան ստորոգրեալ)։ Խոտերը կանաչացան։ Ծառերը ծաղկեցան։ Թռչունները թռան։ Անտառը մերկացաւ։ Գետինը սառեցաւ։ Զիւնը կը հալի։ Արշակը կ'երգէ։ Մինասը կը գրէ։ Ռուբէնը կը խաղայ։ Հայկը կ'աշխատի։ Արմենակը քաջէ։ Արամը ուսումնասէրէ։ Արան գեղեցիկէ։ Նապաստակը երկչոտէ։ Գետինը պինդէ։ Գետը խորէ։ Կաղամբը բանջարէ։ Ծիծեռնակը թռչունէ։ Տունը շէնքէ։ Ալեքսանդր աշխարհակալի անունէ։ Արուսեակ աղջկան անունէ։ Անիւը սայլակի մամնէ։ Սեղանը կարասի է։ Ապրիլ գարնանային ամիս է։ Յուլիս ամառնային ամիս է։ Հոկտեմբեր աշնանային ամիս է։ Յունվար ձմեռնային ամիս է։

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ո Ղ Բ Ա Ռ Ե Ր

Գարնանային գեղեցիկ օրերը սկսան։ — Այս նախասութեան մէջ ժամանակն ըառը կը ցուցնէ թէ՝ օրերը սկսան։ Հեղեղնի բառը կը ցուցնէ թէ ֆակէ։ Օրեր սկսան։ Գարնանային և հեղեղնի բառերը դրուած են օրեր բառի համար։

95. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէք թէ նօտր գրած բառերը ի՞նչ բաներու կը վերաբերին և ո՞ր բառի համար դրուած են։ — Յուրաքանչ զուրկ գիշերն անցաւ։ Պայծառ առաւտը բացուեցաւ։ Գեղեղնի թռչունները արթղնցան։ Կանաչ դաշտը փայլան ցողով ծածկուեցաւ։ Ընդառնի կենդանիները արօտ ելան։ Վայրենի գաղանները իրենց բոյները ստան։ Հայուսար

մառն անցաւ։ Խնձոր աշունը սկսաւ։ Սովորակ ձիւնը ծածկեց սարերն ու ձորեր։ — Պայծառ աստղերը կը փայլէին երկինքը։ — Առաջն աշակերտը կարդաց դասը։ Վերջին նստարանին վրայ նստած են հինգ աշակերտ։ Երեւ ճամբորդներ միատեղ կ'երթային։ — Անեւնին պատերը բարձր են։ Եկեղեցն գմբեթը գեղեցիկէ։ Զեւ պարանոցը կորէ։ Յովհաննէսը վերցուց շնկերն է։ Գեղեղնի թռչունը կ'երգէ։ Երեւութ թռչունը կ'երգէ։ Արամի թռչունը կ'երգէ։

Զկնորսը ուսկանով յառակ որսաց։ — Այս նախադասութեան մէջ յառակ կը ցուցնէ թէ ձկնորսը ի՞նչ որսաց։ Առականով բառը կը ցուցնէ թէ ի՞նչ լ որսաց։ Զկնորսը չեղին ուռկանով ձուկը որսաց։ — Այս նախադասութեան մէջ ալ հերէն բառը կը ցուցնէ թէ ուսկի՞ց որսաց։ — Զարկը, առականով, հեղին բառերը դրուած են բոսաց բառի համար և ստորոգրեալին կը վերաբերին։

96. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէք թէ նօտր գրած բառերը ի՞նչ կը ցուցնեն, ո՞ր բառի համար դրուած են։ — Դիւղացիք յառակ դաստիարակներ կը հաղնին։ Ամառը ծառերու պտուղները կը հասուննան։ Ալեւուակները աշակերտները կը սովորին երես դաստիարակներ։ Եղբայրը տան մէջ կարգի կը գնէր էր հունակներ։ Այսօր հովիւր ծախեց երեւ ճարտար համարակներ։ Երեւ հայրս գնեց եղամար հարկածուր հրեւեր։ Կոշկակարը շատ կ'աշխատի իսկական մէջ։ Դարբինը մէջ ճառագով առաջին կը զարնէ դաստիարակներին։ Դարբինը երկանին կը շինէ սուր կացիներ։ Զարու ջուրը կը սառի յարեն։ Ամառը դաստիարակները ջուրը գոլորշի կը դառնայ։ Մարդիկ երես յառակ կը հաւաքեն երկիւ դաստիարակները։ Ստեղծողը առն ժամանակ կը վարձատրէ աշխատառուրներ։ Փրկիչը կ'օրհնէ բարի առասպեսներ։

46. Այն բառերը որոնք ենթակայի կամ ստորոգրեալի համար կը դրուին և անոնց իմաստը կը պարզեն ու կը լրացնեն, կը կոչուին պարզաբանող բառեր :

Պարզաբանող բառերը միմիայն ենթակայի և ստորոգրեալի համար չ'են դրուիր, անոնք զիրար ալ կարող են պարզաբանել :

Պարզաբանող բառերէն ոմանք կը դրուին առարկայի համար, իսկ ոմանք գործողութեան համար :

97. Վերոյիշեալ (96) վարժութեան մէջ որոշեցէք թէ պարզաբանող բառերէն որո՞նք առարկայի համար և որո՞նք գործողութեան համար դրուած են. Առարկայի և գործողութեան համար դրուած բառերը զատ զատ դասաւորեցէք այն բառերու հետ՝ որոնց համար դրուած են երկու խումբի բաժնելով զանոնք : (Տա՛ զիւսուներ : — Կը հայնին յաւու :)

47. ա. Ենթակայն և ստորոգրեալը նախադասութեան էլեւուր անդամներն են :

բ. Պարզաբանող բառերը նախադասութեան երկրորդական անդամներն են :

գ. Առանց ենթակայի և ստորոգրեալի՝ նախադասութիւն չ'կրնար ըլլալ :

դ. Առանց պարզաբանող բառերու՝ նախադասութիւն կրնայ ըլլալ :

98. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէք

պարզաբանող բառերը, ճշդեցէք թէ ի՞նչ հարցում ներով կ'որոշուին և ո՞ր բառին կը վերաբերին :

Փոքրիկ Հայկանուշը տեսաւ իւր հայրը, Հայրը ափով մանր ու փայլուն սերմեր կը ցանէր : Հայրը սերմերը կը ցանէր վարած հողին մէջ. երկու շաբաթետքը այդ հողը ծածկուեցաւ կանաչ և փափուկ մետաքսանման խոտերով : Կանաչը քիչ քիչ բարձրացաւ : Յօղուններու գլուխներուն վրայ կապտագոյն ծաղիկներ երեւցան . Երբոր վուշը հասաւ, Հայկանուշի ծնողը արմատէն փետտեցին հանեցին զայն : Փետտած վուշն մանր խուրձեր կապեցին : Վուշէն կ'ստանան համեղ ձէթ և պատուական թել : Վուշի թելէն կը գործեն սպիտակ քթան :

Մանուկը պարտէզին մէջ բռնեց սպիտակ թիթեռնիկ մը : — Ծեր մարդ մը իւր պառաւ կնոջ հետ կ'ապրէր : Պառաւը չար կին էր : Ծերը բարի մարդ էր . Երեկոյեան ժամու զանգակը զարկին (որո՞նք) .

Բարեպաշտ մարդիկը ժամու հրաւիրեցին :

99. Սառուգրեալին պարզաբանութիւն բառեր տուեք : — Հնձողները հնձեցին (ի՞նչ) : Զկնորմները որսացին (ի՞նչ) : Մարդիկ կը հնձեն ցորենը (ինչո՞վ, ե՞րբ, ինչպէ՞ս) : Ես փող տուի (ո՞ւմ, ո՞րքան, ե՞րբ) : Պտուղները կը համնի (ե՞րբ, ինչպէ՞ս, ո՞րքան, ի՞նչ բանի վրայ) : Դարբինը կը շինէ (ի՞նչ, ինչէ՞ , ինչո՞վ, ինչպէ՞ս, ինչո՞ւ համար) : Մանուկը գրեց (ի՞նչ, ո՞ւմ, ինչո՞վ, ե՞րբ, ո՞րքան ո՞րտեղ, ինչպէ՞ս) : Գիւղացիք կը սերմանեն (ի՞նչ, ինչո՞վ, ո՞րքան, ինչպէ՞ս, ո՞րտեղ, ե՞րբ, ինչո՞ւ համար) : Մարդիկ կ'աղօթեն (ո՞րտեղ, ինչպէ՞ս, ո՞րքան, ո՞ւմ) : Զին կ'ուտէ (ի՞նչ, ո՞րքան, ինչպէ՞ս) :

100. Հետեւեալ նախադասութեանց մէջ առար-

կայներու մօտ աւելցուցէք պարզաբանող բառեր։ — Զմեռը սկսաւ (ինչպիսի՞ ձմեռ)։ — Ցուրդ ձմեռը ըսկը-սաւ^(*)։ Ամառը եկաւ (ինչպիսի՞)։ Արեւը կը լուսա-ւորէ (ինչպիսի՞, ինչպէ՞ս)։ Աղուէսը կը փորէ (ինչպիսի՞ աղուէս, ի՞նչ կը փորէ)։ Նապաստակը վախցաւ (ինչ-պիսի՞ նապաստակ, ուսկի՞ց)։ Մանուշակը բացուե-ցաւ (ինչպիսի՞, ե՞րբ)։ Եղբայրը եկաւ (որո՞ւ եղբայ-րը, ինչո՞վ)։ Պատերը քանդուեցան (ինչի՞ն պատերը, ի՞նչ բանէ)։ Մայրը կարեց (որո՞ւ մայրը, ի՞նչ, որո՞ւ համար)։ Զին կ'արշաւէ (որո՞ւ ձին, ինչպէ՞ս)։ Ճիւ-զերը բարձրացեր են (ի՞նչ բանի ճիւզերը, ո՞րբան)։ Եղբայրս բերաւ (ո՞ր եղբայրս, ի՞նչ, քանի՞ հատ)։

101. Հետեւեալ նախադասութիւնները հարցում-ներով լուծեցէք։ — Վայրի այծը կը պարտէր բարձրա-բերձ լերան մերկ լանջներուն վրայ։ Ներքեւը, լերան ստորոտը կը թափառէր քաղցած գայլ մը։ Խորամանկ գայլը հրաւիրեց ճարպիկ այծը, որ վար իշնէ և հիւ-թալի խոտ ուտէ։ Զգուշաւոր այծը ականչ չ'կախեց գայլին և մնաց վերը սարահարթին վրայ։ — Բարի խօսքը տուն կը շինէ։ — Անուշ լեզուն օձը ծակէն կը հանէ։ — Ագռաւի խօսքով վարդավառին ձիւն չի գար։ — Կծու քացախը իւր ամանը կը ճայթեցնէ։ — Բարի անունը աշխարհի ամեն հարստութենէն աւե-լի լաւ է։ — Կուշտը սովածին մանը կը բրդէ։ — Ու-րագն իւր կոթը չ'տաշեր։ — Ճրագն իւր տակը լոյս չ'տար։ — Տգէտ մարդու լեզուն երկայն կը լինի։ — Ստախօսի տունը այլեցաւ, ոչ ոք հաւատաց։ — Վատ մարդը՝ Զատկին ալ վատ կը լինի։ Գարիի հացը՝ ցորեն հացի աղքատ եղբայրն է։ — Փայտէ ամանով կերա-կուր չ'են եփեր։

(*) Առարկայն պարզաբանող բառերը միշտ առարկայէն առաջ կը դրուին։

102. Հետեւեալ նախադասութիւնները լուծեցէք տակը գրուած օրինակին համաձայն։ — Թխադոյն կկուն ուրիշ թուչուններու բոյնին մէջ ձու կ'ածէ։ Մոխրագոյն նապաստակը ցողապատ մարգագետնի վրայ հիւթալի խոտ կը վնտուէր։ Աշնան ծառերու դեղ-նած տերեւնները կը թափէ ցուրտ քամին։ Զմեռը սպի-տակ ձիւնը կը ծածկէ սառած երկրիս երեսը։ Թխա-թեւ արծիւը իւր բոյնը կը շինէ ամենամեծ կաղնի-ներու գագամիը։ Գիշերը նրբագդաց ջղիկը յաջո-ղութեամբ կը կոտրտէ գիշերային վնասակար միջատ-ները։ Պնդակազմ հնձողները իրենց սուր մանգ աղ-ներով արագ արագ կը հնձէին աշնան հասունցած արտերը։

Թխադոյն	Ա. Ինչպիսի՞ կկուն, — Թիւհոյն պար-զաբանող բառ է ենթակայի համար դրուած։
կկուն	Բ. Ո՞վ կածէ։ — Կ'ուն։ կկուն՝ են-թակայ է։
ուրիշ	Գ. Ուրիշ՝ պարզաբանող բառ է՝ թըռ-չուններու համար դրուած։
թուչուն-	Դ. Որո՞նց բոյնին մէջ։ — Թուչուննե-րու՝ թուչուններու պարզաբանող բառ է՝ բոյնի համար դրուած։
ներու	Ե. Ո՞ւր տեղ։ — Բոյնին եղ, բոյնին մէջ՝ պարզաբանող բառ է՝ ստորոգըր-եալի համար դրուած։
բոյնին մէջ	Զ. Ի՞նչ կ'ածէ։ — Զու, պարզաբա-նող բառ է՝ ստորոգըրեալի համար դրուած։
ձու	Կկուն ի՞նչ կ'ընէ։ — Կ'ուն, կ'ածէ՝ ստորոգըրեալ է։
կ'ածէ.	

103. Միւնոյն ձեւով լուծեցէք հետեւեալները .
Գիւղացին՝ ջրաղացը ցորեն կը տանէր : Պարկը ծակէ
էր : Քանի մը ցորենի հատիկներ ճամբան թափեցան .
Ծիտերը խմբովին վար իջան և թափուած հատիկնե-
րը կերան : Աքաղաղը տեսաւ զայդ ու վաղեց հալա-
ծեց ծիտերը : Ծիտերը գանդատեցան բաղէին : Բա-
զէն իւր օրէնքով դատեց զանոնք . նախ և առաջ աքա-
ղաղը պատուածեց և յետոյ ծիտերը խղղեց :

Աշունը սկսաւ , ծիծառը թռաւ ,
Անտառն է դատարկ , դաշտը մերկացաւ .
Միայն այնտեղ կայ անսերմ մընացած ,
Տըխուր ու տրտում մի արտ տարածուած :

Կարծես հասկերը միմեանց ականջին ,
«Ի՞նչպէ՞ս կը մըսինք , կ'ըսեն այս ցրտին .
Եատ տիսուր բան է գետին խոնարհիլ՝
Եւ հասուն պըտղով հողին թաթիսուիլ» .

Ամենայն գիշեր մեզի մօտ կ'իջնեն՝
Անցնող թռչուններն և ըզմեղ կ'ուտեն ,
Դաղանք կը տրորեն , քամին կը ծեծէ .
Ո՞ւր է մեր տէրը , ինչի՞ կըսպասէ :

Ա՞հ քամին , նոցա տուաւ սեւ համբաւ
Մահն՝ ձեր տէրը՝ երկրէս վեր առաւ :

Կազմուի : Ո՞ր անդամները գլխաւոր կը կոչուին : Ո-
րո՞նք երկրորդական կը կոչուին : Ենթակայն ո՞րն է :
Ի՞նչ հարցումներով կ'որոշուի ենթակայն : Ո՞րն է ստո-
րոգրեալը : Քանի՞ տեսակ կը լինի ստորոգրեալը : Ի՞նչ
հարցումներով կ'որոշուի նա : Ո՞ր բառերն են որ կը
պարզաբանեն : Նախադասութեան ո՞ր անդամներու
համար կը դրուին անոնք :

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

Դասագրքէն շատ վարժութիւններ :
Անցելո՞ն կը նուանէն : — Նախադասութիւն ըսելով
ի՞նչ կը հասկնանք : Նախադասութիւն մը ինչէ՞ կը

ՎԵՐՉԱԲԱՆ

Մայրենի լեզուի ֆերականութեան տարերաց սոյն Առաջին Մամն, որ հայ մանկուոյն երկրորդ տարւոյ սւսողութեան նիւթը պիտի կազմէ, այս անդամ՝ ի ըսյ կընծայուի աշխատասիրութեամբ « Բիւզանդեան Գրատան » :

Սոյն ընտիր երկասիրութիւնը որ մեր ոռւսահայ քաջածանօթ մանկավարժներէն, արգոյ Պարոն Նիկողայոսի Տէր - Ղեւոնդեանց բազմամեայ փորձառութեան ծնունդն է, իւր ոճոյն պարզութեանը, կանոնաց ճշդութեանը, մասանց գեղեցիկ դասաւորութեանը, հմտալից և նուրբ դիտողութեանցը և վերջապէս գրքոյկն պատուական պարունակութեանը պատճառաւ, աղդային ընտիր դասագրոց շարքին մէջ ընտրելագոյն տեղի մը գրաւելու կատարեալ իրաւունքն ունի և որոյ վասն վկայեմք :

Այսպիսի օգտակար դասագրքի մը հրատարակութիւնը, յետ մանրակրկիտ քննութեան, յանձնարարած լինելով « Բիւզանդեան Գրատան » , այժմ յանձնարարեմք զայն՝ ի կարգին՝ հայ դաստիարակաց որ տան զայն՝ ի վայելս հայ մանկուոյն : —

Այս առթիւ աւելորդ չեմք համարիր կրկին խընդ-

րել ազգային լեզուի քրտնաջան մշակներէն որ սոյն դասագրքին պարունակութիւնը խղճի մտօքաշակերտաց աւանդելու ժամանակ, իրենց գրաւոր դիտողութիւնքը՝ եթէ ունին՝ մատենիս զանազան մասանցը վրայ, իրը անձնական փորձառութեան արդիւնք՝ փութան հաղորդել առ « Բիւզանդեան Գրատանը » որ իւր կարգին պիտի հաղորդէ մեզ զայնս, որպէսզի երկրորդ տպագրութեան ձեռնարկուած պահուն այդ ամեն բանացի դիտողութիւնք ամբողջապէս պարունակուած լինին գրքոյկիս մէջ :

ՔԱՆԻՉՔ ԳՐՈՑԸ



ՑԱՆԿ ԳԼԽՈՅ

1.	Յառաջաբան հեղինակին	Է.	52
2.	Առարկայ	»	7
3.	Շնչաւոր և անշունչ առարկայներ	»	9
4.	Մտաւոր և նիւթական առարկայներ	»	10
5.	Առարկային թիւը	»	12
6.	Առարկային որպիսութիւնը	»	13
7.	Որպիսութեան թիւը	»	17
8.	Առարկային գործողութիւնը	»	18
9.	Թիւ գործողութեան	»	22
10.	Բառ և վանկ	»	26
11.	Հնչիւն և տառ	»	28
12.	տառի գործածութիւնը	»	30
13.	Հ և տառերու գործածութիւնը	»	35
14.	Գործածութիւն և է-երկրաբառներու . .	»	37
15.	Ուզլագրութիւն և տառերու	»	39
16.	Ուզլագրութիւն է և է տառերու	»	42
	(Բառերու կապակցութիւնը)		
17.	Ենթակայ	»	48
18.	Մտորոգրեալ	»	50
19.	Պարզաբանող բառեր	»	58
20.	Վերջաբան	»	66

2018 3135



ՀՅՈՒՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔԻ ԵՎ ԲԻՒԳԱԿԴԱՆՆ ԴՐԱՑԱՆ

1. Արտքսիտու—Տիկին Տիւասք գաշա	դհմ.	15.—
2. Յարոյախօսութիւն զիանանց . Լըկու վէ	"	15.—
3. Մեւ Հնդկաստան . Ժիւլ Վլան	"	6.—
4. Ֆէռնանտ—Ալեքսանդր Տիւմա	"	10.—
5. Արբական Պատմութիւն հին ուստի—) Ուհայիկեանց)	"	4.—
6. Տարերք Քերականութեան Մայրենի Լե- զուի (Եփի Տեր-Ղեւոնդեանց) Մասն Ա.	"	2.—
7. Տարերք Քերականութեան Մայրենի Լե- զուի (Եփի Տեր-Ղեւոնդեանց) Մասն Բ.	"	3.—

Բիւգանդեան Դրատունը կը միա թաց ծանուցանել մայ-
րաքալարին և գաւառաց Ազ ին մարդարանոց տես-
չութեանց ինչպէս և իւր ամեն առ յաճախորդաց թէ
դպրոցական ամեն անսակ գըրեւ հայ, թէ ոք և ֆասու-
թեզուով աշխարհացց անսակ ոք և ընդհանրապէս դրա-
բացական ամեն անսակ ոպերոյք (matériel scolaire) լա-
ւագոյն գնել կը մաս ունարարուին:

Երրուգեան լրագրաց բաժանորդագրութիւնք, ինչպէս
նաև ամեն կորդի յանձնարարութիւնք դրական, գասական
և գիտական գրաց վրաց կ'ընդունուին և ամենայն արա-
գութեամբ կը գործադրուին: Բիւգանդեան Գրատունն որ
ի Կալաթիտ, Սեղոս Խան թիւ 5: բաց է ամեն երեք-
շարթի և ուրբաթ, իսկ միւս օրերն՝ առաջու և երեկոց
միայն: